**ՆՇԱԹԵՐԹ**
պետական գրանցման
մասին տեղեկությունների

# «ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Միջկառավարական համաձայնագիր

Գրանցված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

| | |
|---|---|
| *Գրանցված է՝* | ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն |
| *Աշխատակից՝* | Սաթենիկ Միքայելյան |
| *Գրանցման ամսաթիվ՝* | 28.07.2008 |
| *Գրանցման համար՝* | 264.211.08329 |
| *ՀՎՀՀ՝* | 00053474 |

Պետական գրանցման մասին տեղեկությունների նշաթերթը էլեկտրոնային եղանակով ձևավորված է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգի կողմից և հանդիսանում է **«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Միջկառավարական համաձայնագիր** նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:

*Սույն նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցումը հավաստվում է համակարգի կողմից գեներացված RB2D-853E-C9E5-124D ծածկագրով քաղվածքով, որի իսկությունը և արդիականությունը կարող է ստուգվել փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգում (e-verify.am):*

Կազմված է 12.05.2026թ. և բաղկացած է 41 թերթից

Տպագրված է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ  Է

Հայաստանի Հանրապետության
կողմից լիազորված մարմնի՝
Կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի 06.03.2026թ.
N 347-Ա/2 և Ռուսաստանի
Դաշնության կողմից լիազորված
մարմնի՝ Գիտության և բարձրագույն
կրթության նախարարության
16.03.2026թ. N 162 հրամաններով

Ռեկտոր՝

__________ Էդվարդ Սանդոյան

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ  Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 28.07.2008 թ.
գրանցման համար 264.211.08329
ՀՎՀՀ՝ 00053474

28.07.2008թ. գրանցված կանոնադրության
թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից "18" 05 2026թ.

Աշխատակից՝

__________

# «ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

**УТВЕРЖДАЮ**

Заместитель Министра
науки и высшего образования
Российской Федерации

**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ**

Ռուսաստանի Դաշնության
գիտության և բարձրագույն կրթության
նախարարի տեղակալ

# УСТАВ

## МЕЖГОСУДАРСТВЕННОЙ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ОРГАНИЗАЦИИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ «РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ»

Приказ Министерства
науки и высшего образования
Российской Федерации

Ռուսաստանի Դաշնության
գիտության և բարձրագույն կրթության
նախարարության

от «16» марта 2026 г. № 162

**УТВЕРЖДАЮ**

Заместитель Министра
образования, науки, культуры и спорта
Республики Армения

**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ**

Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
տեղակալ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Приказ Министра
образования, науки, культуры
и спорта Республики Армения

Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
հրաման

2026 թ. մարտի 06-ի № 347-Ա/2

## СОДЕРЖАНИЕ


I. ОБЩИЕ ПОЛОЖЕНИЯ
II. ПРЕДМЕТ, ЦЕЛИ И КОМПЕТЕНЦИИ ДЕЯТЕЛЬНОСТИ УНИВЕРСИТЕТА
III. ПРИЕМ В УНИВЕРСИТЕТ
IV. НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ УНИВЕРСИТЕТА
V. НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКАЯ, НАУЧНО-ТЕХНИЧЕСКАЯ И ИННОВАЦИОННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ УНИВЕРСИТЕТА
VI. СТРУКТУРА УНИВЕРСИТЕТА
VII. ОРГАНИЗАЦИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ И УПРАВЛЕНИЕ УНИВЕРСИТЕТОМ
VIII. РАБОТНИКИ И ОБУЧАЮЩИЕСЯ УНИВЕРСИТЕТА
IX. ЭКОНОМИКА УНИВЕРСИТЕТА
X. МЕЖДУНАРОДНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ УНИВЕРСИТЕТА
XI. ВИДЫ ЛОКАЛЬНЫХ НОРМАТИВНЫХ АКТОВ УНИВЕРСИТЕТА
XII. РЕОРГАНИЗАЦИЯ И ЛИКВИДАЦИЯ УНИВЕРСИТЕТА


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԸ
III. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
VI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
VII. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
VIII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ
IX. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
X. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
XI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ
XII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

| I. ОБЩИЕ ПОЛОЖЕНИЯ | I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ |
|---|---|
| 1. Российско-Армянский университет (далее – Университет) является межгосударственной образовательной организацией высшего образования, находящейся в совместном ведении Республики Армения и Российской Федерации (далее вместе – Стороны). | 1. Ռուս-Հայկական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) հանդիսանում է բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն, որը համատեղ կառավարվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ Կողմեր) կողմից: |
| 2. Университет учрежден в соответствии с Соглашением между Правительством Российской Федерации и Правительством Республики Армения об условиях учреждения и деятельности в городе Ереване Российско-Армянского университета от 29 августа 1997 г. (с изменениями и дополнениями от 23 апреля 2003 г. и от 20 декабря 2024 г.) и постановлением Правительства Республики Армения № 543 от 28 ноября 1997 г. «Об учреждении в городе Ереване Российско-Армянского университета». | 2. Համալսարանը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-Հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին 1997 թվականի օգոստոսի 29-ի Համաձայնագրի (2003 թվականի ապրիլի 23-ի փոփոխություններով և լրացումներով) և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1997 թվականի նոյեմբերի 28-ի «Երևան քաղաքում Ռուս-Հայկական համալսարան հիմնադրելու մասին» թիվ 543 Որոշման համաձայն: |
| 3. Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Республики Армения об условиях деятельности в Республике Армения Российско-Армянского университета от 20 декабря 2024 г. (далее - Соглашение), ратифицированное Российской Федерацией Федеральным законом от 31 июля 2025 г. № 292-ФЗ и Республикой Армения законом от 11 июля 2025 г. № ՀՕ-199-Ն, актуализирует условия деятельности Университета. | 3. 2024 թվականի դեկտեմբերի 20-ին ստորագրված «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), որը վավերացվել է Ռուսաստանի Դաշնության կողմից 2025 թվականի հուլիսի 31-ի № 292-ФЗ Դաշնային օրենքով և Հայաստանի Հանրապետության կողմից՝ 2025 թվականի հուլիսի 11-ի № ՀՕ-199-Ն օրենքով, սահմանում է Համալսարանի գործունեության պայմանները: |
| 4. В соответствии с законодательством Республики Армения Университет является государственным университетом Республики Армения и имеет статус фонда. | 4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Համալսարանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական համալսարան և ունի հիմնադրամի կարգավիճակ: |
| 5. В соответствии с законодательством Российской Федерации Университет пользуется статусом федеральной государственной образовательной организации высшего образования в Российской Федерации. | 5. Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան Համալսարանը օգտվում է Ռուսաստանի Դաշնությունում բարձրագույն կրթության դաշնային պետական կրթական կազմակերպության կարգավիճակից: |
| 6. Университет является юридическим лицом и обладает правоспособностью осуществлять деятельность на территории Сторон в соответствии с законодательством Сторон. Университет зарегистрирован в органах государственной регистрации юридических лиц | 6. Համալսարանն իրավաբանական անձ է և ունի Կողմ պետությունների տարածքներում գործունեություն իրականացնելու իրավունակություն՝ Կողմ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Համալսարանը գրանցված է Հայաստանի Հանրապետության Արդարադատության |

| | |
|---|---|
| Министерства юстиции Республики Армения, регистрационный номер 264.211.08329. | նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման մարմիններում, գրանցման համար՝ 264.211.08329: |
| 7. Наименование Университета: | 7. Համալսարանի անվանումը. |
| 1) полное наименование Университета на русском языке – межгосударственная образовательная организация высшего образования «Российско-Армянский университет»; сокращенное наименование на русском языке – РАУ; | 1) լրիվ անվանումը ռուսերեն՝ межгосударственная образовательная организация высшего образования «Российско-Армянский университет», կրճատ անվանումը ռուսերեն՝ РАУ, |
| 2) полное наименование на армянском языке– «Ռուս-Հայկական համալսարան», բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն; сокращенное наименование на армянском языке – ՌՀՀ; | 2) լրիվ անվանումը հայերեն՝ «Ռուս-Հայկական համալսարան», բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն, կրճատ անվանումը հայերեն՝ ՌՀՀ, |
| 3) полное наименование на английском языке – interstate educational organization of higher education «Russian-Armenian University»; сокращенное наименование на английском языке – RAU. | 3) լրիվ անվանումը անգլերեն՝ foundation, interstate educational organization of higher education «Russian-Armenian University», կրճատ անվանումը անգլերեն՝ RAU: |
| 8. Место нахождения Университета: Республика Армения, 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123. | 8. Համալսարանի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0051, ք.Երևան, Հովսեփ Էմինի փ.123: |
| 9. Учредителями Университета являются Правительства Сторон. Полномочия Учредителей Университета осуществляют следующие Уполномоченные органы Сторон: | 9. Համալսարանի հիմնադիրներն են Կողմերի Կառավարությունները: Համաձայնագրի իրականացման մասով Համալսարանի Հիմնադրի լիազորություններն իրականացնում են Կողմերի հետևյալ լիազոր մարմինները՝ |
| от Правительства Республики Армения – Министерство образования, науки, культуры и спорта Республики Армения (далее – Уполномоченный орган от Армянской Стороны); | Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Հայկական Կողմի Լիազոր մարմին), |
| от Правительства Российской Федерации – Министерство науки и высшего образования Российской Федерации (далее – Уполномоченный орган от Российской Стороны). | Ռուսաստանի Դաշնության Գիտության և բարձրագույն կրթության նախարարությունը (այսուհետ՝ Ռուսական Կողմի Լիազոր մարմին): |
| 10. Место нахождения Уполномоченных органов Сторон: | 10. Կողմերի լիազոր մարմինների գտնվելու վայրն է. |
| 1) Уполномоченный орган от Армянской Стороны – Республика Армения, 0010, г. Ереван, Дом Правительства 2, ул. Вазгена Саргсяна, д. 3; | 1) Հայկական Կողմի Լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երեւան, Կառավարական տուն 2, Վազգեն Սարգսյան փ., 3, |

| | |
|---|---|
| 2) Уполномоченный орган от Российской Стороны – Российская Федерация, 125009, г. Москва, Тверская ул., д. 11 ГСП - 3, 125993. | 2) Ռուսական Կողմի Լիազոր մարմին՝ Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, Տվերսկայա փ., տուն 11, ՔԾՓ - 3, 125993: |
| 11. Университет имеет обособленное имущество, самостоятельный баланс, бюджет, банковские счета для осуществления всех видов расчетных, кредитных и кассовых операций. | 11. Համալսարանն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, բյուջե, բանկային հաշիվներ՝ բոլոր տեսակի հաշվարկային, վարկային և դրամարկղային գործառնությունների իրականացման համար: |
| 12. Университет имеет круглую печать с изображением герба Республики Армения и наименованием на армянском и русском языках, штампы и бланки, ордена и медали, а также флаг, герб и гимн. | 12. Համալսարանն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հայերեն ու ռուսերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմներ ու ձևաթղթեր, շքանշաններ ու մեդալներ, ինչպես նաև դրոշ, զինանշան և օրհներգ: |
| 13. Рабочими языками Университета являются русский и армянский. Делопроизводство в Университете ведется на русском языке, а в рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Республики Армения, – на армянском языке. Армянский язык используется в переписке Университета с государственными ведомствами и организациями Республики Армения. | 13. Համալսարանի աշխատանքային լեզուներն են ռուսերենը և հայերենը: Համալսարանում գործավարությունն իրականացվում է ռուսերենով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում՝ հայերենով: Հայերենն օգտագործվում է Համալսարանի՝ Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչությունների և կազմակերպություն-ների հետ նամակագրության մեջ: |
| 14. Университет обеспечивает необходимые условия, в том числе социальную, культурную, спортивную и рекреационно-оздоровительную инфраструктуру для обучения, профессиональной деятельности, научных исследований, экспериментальных разработок, опытно-конструкторских и технологических работ, творческого развития и сохранения здоровья обучающихся, научно-педагогических и других категорий работников Университета. | 14. Համալսարանն ապահովում է անհրաժեշտ պայմաններ, այդ թվում՝ սոցիալական, մշակութային, սպորտային և հանգստյան և առողջարանային ենթակառուցվածքներ կրթության, մասնագիտական գործունեության, գիտական հետազոտությունների, փորձարարական զարգացումների, զարգացման և տեխնոլոգիական աշխատանքների, Համալսարանի ուսանողների, գիտամանկավարժական և աշխատողների այլ կատեգորիաների ստեղծագործական զարգացման և առողջության պահպանման համար: |
| 15. Университет вправе участвовать, совместно с другими юридическими лицами, в реализации уставных положений в установленном законодательством Сторон порядке. | 15. Համալսարանն իրավունք ունի այլ իրավաբանական անձանց հետ մասնակցելու կանոնադրական դրույթների իրականացմանը՝ Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| 16. Создание и функционирование общественно-политических, общественных и религиозных организаций, а также их организационных структур на территории Университета запрещено, за исключением профсоюзных, профессиональных, культурных, спортивных, студенческих организаций, а также организаций выпускников. | 16. Արգելվում է Համալսարանում հասարակական-քաղաքական, հասարակական և կրոնական կազմակերպությունների, դրանց կազմակերպական կառույցների ստեղծումն ու գործունեությունը՝ բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական, սովորողների և շրջանավարտների կազմակերպությունների: |

| | |
|---|---|
| 17. Университет осуществляет в соответствии с законодательством Сторон работы по комплектованию, хранению, учету и использованию архивных документов, образовавшихся в процессе его деятельности. | 17. Համալսարանը, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրության, իրականացնում է իր գործունեության ընթացքում ստեղծված արխիվային փաստաթղթերի ձեռքբերման, պահպանման, հաշվառման և օգտագործման աշխատանքներ: |
| 18. Отношения между Университетом и Учредителями регулируются законодательством Сторон, Соглашением и настоящим Уставом. | 18. Համալսարանի և Հիմնադիրների միջև հարաբերությունները կարգավորվում են Կողմերի օրենսդրությամբ, Համաձայնագրով և սույն Կանոնադրությամբ: |
| 19. Научными, научно-педагогическим, педагогическим работникам, другим работникам и обучающимся в Университете гарантируются академические права и свободы, предусмотренные законодательством Сторон. | 19. Համալսարանում գիտական, գիտամանկավարժական, մանկավարժական և այլ աշխատողներին ու սովորողներին երաշխավորվում են Կողմ պետությունների օրենսդրությամբ նախատեսված ակադեմիական իրավունքներն ու ազատությունները: |
| 20. Основным документом, регулирующим деятельность Университета, является Устав. Устав Университета, все изменения и (или) дополнения к нему подлежат регистрации по месту нахождения Университета в соответствии с законодательством Республики Армения. | 20. Համալսարանի գործունեությունը կարգավորող հիմնական փաստաթուղթը Կանոնադրությունն է: Համալսարանի Կանոնադրությունը, դրանում բոլոր փոփոխությունները և (կամ) լրացումները ենթակա են գրանցման ըստ Համալսարանի գտնվելու վայրի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: |
| **II. ПРЕДМЕТ, ЦЕЛИ И КОМПЕТЕНЦИИ ДЕЯТЕЛЬНОСТИ УНИВЕРСИТЕТА** | **II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԸ** |
| 21. Предметом деятельности Университета являются: | 21. Համալսարանի գործունեության առարկան է՝ |
| 1) образовательная деятельность по образовательным программ разного уровня; | 1) Կրթական գործունեություն՝ տարբեր մակարդակների կրթական ծրագրեր: |
| 2) научная деятельность - проведение научных исследований, экспериментов, распространение знаний; | 2) Հետազոտական գործունեություն՝ հետազոտությունների, փորձերի անցկացում և գիտելիքների տարածում: |
| 3) инновационная и методическая деятельность – внедрение новых технологий, методическое сопровождение образования и науки; | 3) Նորարարական և մեթոդական գործունեություն՝ նոր տեխնոլոգիաների ներդրում և կրթության ու գիտության մեթոդական աջակցության տրամադրում |
| 4) международное сотрудничество – интеграция с мировым научным и образовательным сообществом; | 4) Միջազգային համագործակցություն՝ ինտեգրում համաշխարհային գիտական և կրթական հանրության հետ: |
| 5) издательская деятельность – публикация монографий, статей, сборников и журналов; | 5) Հրատարակչական գործունեություն՝ մենագրությունների, հոդվածների, ժողովածուների և ամսագրերի հրատարակում: |

| | |
|---|---|
| 6) коммерциализация и управление интеллектуальной собственностью – использование результатов интелектуальной деятельности, получение доходов от прав на интеллектуальную собственность, внедрение инноваций. | 6) Մտավոր սեփականության առևտրայնացում և կառավարում՝ հետազոտությունների արդյունքների օգտագործում, մտավոր սեփականության իրավունքներից եկամուտների ստեղծում և նորարարությունների ներդրում: |
| 6) В рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Российской Федерации, обучение в Университете ведется на русском языке с обязательным преподаванием армянского языка. В рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Республики Армения, обучение в Университете ведется на армянском языке с обязательным преподаванием русского языка. | 6) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում Համալսարանում ուսուցումն իրականացվում է ռուսերենով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում Համալսարանում ուսուցումն իրականացվում է հայոց լեզվով՝ ռուսաց լեզվի պարտադիր ուսուցմամբ: |
| 22. Целями деятельности Университета являются: | 22. Համալսարանի գործունեության նպատակներն են. |
| 1) подготовка высококвалифицированных кадров, в том числе научных и научно-педагогических кадров, в соответствии с утвержденными в Республике Армения государственными образовательными стандартами и требованиями и утвержденными в Российской Федерации федеральными государственными образовательными стандартами и федеральными требованиями; | 1) բարձր որակավորում ունեցող կադրերի, այդ թվում՝ գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստում՝ Հայաստանի Հանրապետությունում հաստատված պետական կրթական չափորոշիչներին և պահանջներին և Ռուսաստանի Դաշնությունում հաստատված դաշնային պետական կրթական չափորոշիչներին և պահանջներին համապատասխան, |
| 2) осуществление образовательной, научной и инновационной деятельности; | 2) կրթական, գիտական և նորարարական գործունեության իրականացում, |
| 3) проведение фундаментальных и прикладных научных исследований, совместно с образовательными организациями высшего образования и научными организациями Сторон и других государств; | 3) հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների անցկացում Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, և այլ պետությունների բարձրագույն կրթության կրթական կազմակերպությունների և գիտական կազմակերպությունների հետ համատեղ, |
| 4) реализация научно-технических проектов, в том числе с привлечением в качестве заказчиков представителей бизнес-сообщества; | 4) գիտատեխնիկական նախագծերի իրականացում, այդ թվում՝ որպես պատվիրատու՝ գործարար համայնքի ներկայացուցիչների ներգրավմամբ, |
| 5) поддержка и финансирование науки, развитие уникальных компетенций; | 5) գիտության աջակցություն և ֆինանսավորում, յուրահատուկ կոմպետենցիաների զարգացում, |
| 6) удовлетворение образовательных потребностей личности, содействие сохранению, развитию и взаимообогащению культур, языков, исторических и | 6) անձի կրթական պահանջմունքների բավարարում, աջակցություն Կողմերի պետությունների ժողովուրդների մշակույթների, լեզուների, պատմական և ազգային ավանդույթների |

| | |
|---|---|
| национальных традиций народов государств Сторон; | պահպանմանը, զարգացմանը և փոխհարստացմանը, |
| 7) проведение просветительских мероприятий с целью популяризации русского языка, русской литературы и культуры; | 7) լուսավորչական միջոցառումների անցկացում ռուսաց լեզվի և ռուսական մշակույթի հանրայնացման նպատակով, |
| 8) обеспечение расширения взаимодействия с общеобразовательными школами, с учреждениями среднего профессионального образования, а также с вузами в Республике Армения с целью углубленного изучения русского языка в Республике Армения; | 8) Հայաստանի Հանրապետությունում ռուսաց լեզվի խորացված ուսուցման նպատակով հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ինչպես նաև բուհերի հետ փոխգործակցության ընդլայնման ապահովում, |
| 9) создание и развитие центра повышения квалификации и переподготовки преподавателей русского языка; | 9) ռուսաց լեզվի ուսուցիչների որակավորման բարձրացման և վերապատրաստման կենտրոնի ստեղծում և զարգացում, |
| 10) реализация программ академических обменов и стажировок в образовательных организациях высшего образования и научных организациях Сторон и других государств; | 10) ակադեմիական փոխանակումների և ստաժավորման ծրագրերի իրականացում Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների բարձրագույն կրթության կրթական կազմակերպություններում և գիտական կազմակերպություններում, |
| 11) проведение выставок и ярмарок российского образования; | 11) ռուսաստանյան կրթության ցուցահանդեսների և տոնավաճառների անցկացում, |
| 12) проведение предметных олимпиад, конкурсов и различных предметных соревнований; | 12) առարկայական օլիմպիադաների, մրցույթների և տարբեր առարկայական մրցաշարերի անցկացում, |
| 13) усиление роли и влияния Сторон в мировой гуманитарной и научно-технической сферах, взаимное укрепление положительного имиджа Сторон, укрепление общего культурного, образовательного и научного пространства; | 13) Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դերի և ազդեցության ուժեղացում համաշխարհային հումանիտար և գիտատեխնիկական ոլորտներում, Կողմերի պետությունների դրական իմիջի փոխադարձ ամրապնդում, ընդհանուր մշակութային, կրթական և գիտական տարածքի ամրապնդում, |
| 14) формирование у обучающихся гражданской позиции, развитие ответственности, самостоятельности и творческой активности; | 14) ուսումնառողների շրջանում քաղաքացիական կողմնորոշման ձևավորում, պատասխանատվության, ինքնուրույնության և ստեղծարար ակտիվության զարգացում, |
| 15) воспитание у обучающихся чувства патриотизма, любви и уважения к национальным традициям и духовному наследию Сторон, бережного отношения к репутации Университета; | 15) ուսանողների մոտ հայրենասիրության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ազգային ավանդույթների և հոգևոր ժառանգության հանդեպ սիրո և հարգանքի, Համալսարանի հեղինակության նկատմամբ հոգատար վերաբերմունքի դաստիարակություն, |

| | |
|---|---|
| 16) обеспечение практического внедрения результатов интеллектуальной деятельности Университета, в том числе за счет их коммерциализации. | 16) Համալսարանի մտավոր գործունեության արդյունքների գործնական ներդրման ապահովում, այդ թվում՝ դրանց առևտրայնացման միջոցով: |
| 23. Реализация целей Университета достигается посредством применения передовых технологий в области образования и науки, использования лучшего национального и мирового опыта, а также содействия интеграции науки и образования в международное научно-исследовательское и образовательное пространство. | 23. Համալսարանի նպատակների իրագործումը իրականացվում է կրթության և գիտության ոլորտում առաջատար տեխնոլոգիաների կիրառման, ազգային և համաշխարհային լավագույն փորձի կիրառման, ինչպես նաև միջազգային գիտահետազոտական և կրթական տարածքում գիտության և կրթության ինտեգրմանը նպաստելու միջոցով: |
| 24. В соответствии с уставными целями, к компетенции Университета относятся: | 24. Համաձայն կանոնադրական նպատակների՝ Համալսարանի իրավասություններն են. |
| 1) реализация образовательных программ на всех уровнях, установленных законодательством Сторон – программ высшего, дополнительного, дополнительного профессионального, общеобразовательных программ всех уровней; | 1) Կողմերի օրենսդրությամբ սահմանված բոլոր մակարդակներում կրթական ծրագրերի իրականացում - բարձրագույն, լրացուցիչ, լրացուցիչ մասնագիտական, հանրակրթական (բոլոր մակարդակներում), |
| 2) осуществление мер по обеспечению выполнения требований федеральных государственных образовательных стандартов высшего образования и федеральный государственных требований Российской Федерации, лицензионных и аккредитационных требований Республики Армения к применяемым механизмам оценки качества образовательной деятельности; | 2) Ռուսաստանի Դաշնության բարձրագույն կրթության դաշնային պետական կրթական չափորոշիչների և դաշնային պետական պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից կրթական գործունեության որակի գնահատման կիրառվող մեխանիզմներին ներկայացվող լիցենզավորման և հավատարմագրման պահանջների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում: |
| 3) разработка и утверждение образовательных программ и их компонентов (описаний образовательных программ, учебных планов, календарных графиков учебного процесса, рабочих учебных программ дисциплин, программ практик, государственной итоговой аттестации и др.), в том числе с привлечением экспертов и высококвалифицированных специалистов по сферам профессиональной деятельности, а также издание научной, учебной и учебно-методической литературы; | 3) Կրթական ծրագրերի և դրանց բաղադրիչների (կրթական ծրագրերի նկարագրությունների, ուսումնական պլանների, ուսումնական գործընթացի օրացուցային գրաֆիկների, առարկաների աշխատանքային ուսումնական ծրագրերի, պրակտիկաների ծրագրերի, պետական ավարտական ատեստավորման ծրագրերի և այլն) մշակումն ու հաստատումը՝ այդ թվում համապատասխան մասնագիտական գործունեության ոլորտների փորձագետների և բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավմամբ, ինչպես նաև գիտական, ուսումնական և ուսումնական-մեթոդական գրականության հրատարակում: |
| 4) самостоятельное принятие решений по вопросам организации учебного процесса, применения образовательных технологий, а также выбора форм, порядка и периодичности текущей, промежуточной и итоговой аттестации обучающихся; | 4) ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների, ինչպես նաև սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի և պարբերականության ընտրության վերաբերյալ ինքնուրույն որոշումների կայացում, |

| | |
|---|---|
| 5) организация приема и привлечение абитуриентов, в том числе иностранных граждан, в соответствии с уровнями образования и образовательными программами; | 5) դիմորդների, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, ընդունելության կազմակերպում և ներգրավում՝ ըստ կրթական մակարդակների և կրթական ծրագրերի, |
| 6) изучение потребностей рынка труда, проведение анализа трудоустройства выпускников и их карьерного роста, информирование выпускников о ситуации в сфере занятости, содействие студентам и выпускникам в трудоустройстве; | 6) աշխատաշուկայի պահանջմունքների ուսումնասիրության ապահովում, շրջանավարտների աշխատանքի տեղավորման վերլուծության իրականացում, շրջանավարտների իրազեկում զբաղվածության ոլորտի իրավիճակի մասին, աջակցություն ուսանողներին և շրջանավարտներին աշխատանքի տեղավորման հարցում, |
| 7) разработка и представление Управляющему совету Университета на утверждение структуры Университета; | 7) Համալսարանի կառուցվածքի մշակում և ներկայացում ՌՀՀ Կառավարման խորհրդի հաստատմանը, |
| 8) осуществление подбора, приема на работу и расстановки научных и педагогических работников, административно-управленческого персонала и иных категорий работников, а также организация мероприятий, направленных на повышение их квалификации (аттестация, программы повышения квалификации и др.); | 8) գիտամանկավարժական և գիտական կադրերի, վարչական անձնակազմի և աշխատողների այլ կատեգորիաների ընտրության, աշխատանքի ընդունման և տեղաբաշխման իրականացում, ինչպես նաև նրանց որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում (ատեստավորում, որակավորման բարձրացման դասընթացներ և այլն, |
| 9) осуществление мер по обеспечению выполнения требований федеральных государственных образовательных стандартов Российской Федерации и лицензионных требований Республики Армения; | 9) ՌԴ բարձրագույն կրթության դաշնային պետական կրթական չափորոշիչների և ՀՀ լիցենզավորման պահանջների ապահովման միջոցառումների իրականացում, |
| 10) разработка и утверждение штатного расписания работников всех категорий, а также процедуры и порядка их назначения или избрания на должность; | 10) բոլոր կատեգորիաների աշխատողների հաստիքացուցակի, ինչպես նաև պաշտոններում նրանց նշանակման կամ ընտրության ընթացակարգի և կարգի մշակում և հաստատում, |
| 11) принятие мер по обеспечению организационно-правового механизма контроля за соблюдением законодательства Сторон, норм и правил организации образовательного процесса, анализ порождающих нарушения причин, определение мер ответственности за нарушения; | 11) Կողմերի օրենսդրության, ուսումնական գործընթացի կազմակերպման նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության կազմակերպաիրավական մեխանիզմի ապահովման ուղղությամբ միջոցների ձեռնարկում, խախտումներ առաջացնող պատճառների վերլուծություն, խախտումների համար պատասխանատվության միջոցների սահմանում, |
| 12) присвоение работникам Университета, а также научным, общественным, политическим и другим деятелям почетных званий, награждение установленными локальными нормативными актами Университета наградами, представление работников к награждению государственными и ведомственными наградами Сторон; | 12) Համալսարանի աշխատակիցներին, ինչպես նաև գիտական, հասարակական, քաղաքական և այլ գործիչներին Ռուս-Հայկական համալսարանի պատվավոր կոչումներով և պարգևներով պարգևատրում, իր աշխատակիցներին ՌԴ և ՀՀ պետական և գերատեսչական պարգևներով պարգևատրման առաջադրում, |

| | |
|---|---|
| 13) обеспечение целевого и эффективного расходования финансовых средств Университета; | 13) Համալսարանի ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ ծախսման ապահովում, |
| 14) реализация мероприятий, направленных на социальную защиту обучающихся и работников; | 14) ուսումնառողների և աշխատողների սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում, |
| 15) самостоятельное использование, владение и распоряжение имуществом, передаваемым Университету с правом бессрочного и безвозмездного пользования, собственности, аренды и т.д., в том числе для ведения хозяйственной деятельности; | 15) Համալսարանին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի ինքնուրույն օգտագործում, սեփականության, տնօրինում և տիրապետում ձակալության և այլն, այդ թվում՝ տնտեսական գործունեություն ծավալելու համար, |
| 16) осуществление всех видов приносящей доход деятельности, не запрещенной законодательством Сторон для реализации уставных целей; | 16) կանոնադրական նպատակների իրականացման համար Կողմերի օրենսդրությամբ չարգելված եկամուտ բերող գործունեության բոլոր տեսակների իրականացում, |
| 17) самостоятельное использование доходов, получаемых в результате осуществления предусмотренной настоящим Уставом и не запрещенной законодательством Сторон приносящей доход деятельности. | 17) Կանոնադրությամբ նախատեսված և Կողմերի օրենսդրությամբ չարգելված եկամուտ բերող գործունեության իրականացման արդյունքում ստացված եկամտի ինքնուրույն օգտագործում: |
| **III. ПРИЕМ В УНИВЕРСИТЕТ** | **III.ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ** |
| 25. Прием в Университет осуществляется в соответствии с законодательством Сторон и настоящим Уставом. Университет самостоятельно разрабатывает и утверждает правила приема в части, не противоречащей законодательству Сторон и порядку приема, устанавливаемому Уполномоченными органами Сторон.<br>Прием отдельных категорий поступающих на места за счет бюджетных ассигнований федерального бюджета Российский Федерации осуществляется в соответствии с Правилами приема, установленными Университетом. | 25. Համալսարանի ընդունելությունն իրականացվում է Կողմերի օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան: Համալսարանն ինքնուրույն է մշակում և հաստատում ընդունելության կանոններն այն մասով, որը չի հակասում Կողմերի օրենսդրությանը և Լիազորված մարմինների կողմից սահմանվող ընդունելության կարգին:<br><br>Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի միջոցների հաշվին նախատեսված տեղերում դիմորդների առանձին կատեգորիաների ընդունելությունն իրականացվում է համաձայն Համալսարանի կողմից սահմանված ընդունելության կանոնների: |
| 26. Правом поступления в Университет пользуются лица, имеющие образование соответствующего уровня, независимо от гражданства, национальности, пола, возраста, вероисповедания, расы, языка, происхождения, места жительства, состояния здоровья, социального и имущественного положения и политических взглядов. | 26. Համալսարան ընդունվելու իրավունքից օգտվում են համապատասխան մակարդակի կրթություն ունեցող անձինք՝ անկախ քաղաքացիությունից, ազգությունից, սեռից, տարիքից, դավանանքից, ռասայից, լեզվից, ծագումից, բնակության վայրից, առողջական վիճակից, սոցիալական և գույքային դրությունից և քաղաքական հայացքներից: |

| | |
|---|---|
| 27. Университет публикует на своем официальном сайте правила приема, Устав, лицензии на осуществление образовательной деятельности, свидетельства (информацию) о государственной аккредитации Университета. | 27. Համալսարանն իր պաշտոնական կայքում հրապարակում է ընդունելության կանոնները, Կանոնադրությունը, կրթական գործունեության իրականացնելու լիցենզիները, Համալսարանի պետական հավատարմագրման վկայականը, |
| 28. Количество мест приема на обучение за счет бюджетных ассигнований федерального бюджета Российской Федерации определяется ежегодно Уполномоченным органом от Российской Стороны по заявке Университета, подаваемой и рассматриваемой в порядке, установленном Уполномоченным органом от Российской Стороны.<br>Количество лиц, принимаемых на первый курс Университета для обучения за счет средств государственного бюджета Республики Армения, определяется в пределах мест с полной компенсацией платы за обучение в виде студенческих пособий, устанавливаемых ежегодно решением Правительства Республики Армения на основании заявки Университета.<br>Прием на образовательные программы бакалавриата и специалитета, реализуемые в соответствии с федеральными государственными образовательными стандартами Российской Федерации, осуществляется на равноправной конкурсной основе на основании результатов единых государственных экзаменов Российской Федерации, единых государственных экзаменов Республики Армения, а также по результатам внутренних вступительных испытаний, проводимых Университетом, в порядке, установленном правилами приема. | 28. Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի հաշվին սովորելու համար Համալսարանի առաջին կուրսում ընդունված անձանց թվաքանակը և դրանց ընդունելության ընթացակարգը որոշվում են Համալսարանի կողմից ներկայացվող հայտի հիման՝ վրա յուրաքանչյուր տարի սահամվող հսկիչ թվերի շրջանակներում:<br>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին Համալսարանի առաջին կուրս ընդունվողների թվաքանակը սահմանվում է ՀՀ Կառավարության որոշմամբ յուրաքանչյուր տարի սահմանվող ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման տեղերի շրջանակներում՝ Համալրսարանի կողմից ներկայացված հայտի համաձայն:<br>Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներով իրականացվող բակալավրի և մասնագիտացման կրթական ծրագրերով ընդունելությունն իրականացվում է հավասար իրավունքներով մրցութային հիմունքներով՝ Ռուսաստանի Դաշնության միասնական պետական քննությունների, Հայաստանի Հանրապետության միասնական պետական քննությունների արդյունքների, ինչպես նաև Համալսարանի կողմից անցկացվող ներքին ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա՝ ընդունելության կանոններով սահմանված կարգով: |
| 29. Для проведения вступительных испытаний и зачисления в Университет создаются приемная, предметные, апелляционные комиссии, порядок формирования, состав, полномочия и деятельность которых регламентируются соответствующими положениями, утверждаемыми Ректором Университета. | 29. Ընդունելության քննություններն անցկացնելու և Համալսարան ընդունվելու համար ստեղծվում են ընդունելության, առարկայական, բողոքարկման հանձնաժողովներ, որոնց ձևավորման կարգը, կազմը, լիազորություններն ու գործունեությունը կանոնակարգվում են Համալսարանի Ռեկտորի կողմից հաստատվող համապատասխան կանոնակարգերով: |
| 30. Обучение за счет бюджетных ассигнований федерального бюджета Российской Федерации организуется в соответствии с законодательством Российской Федерации. Обучение за счет средств государственного бюджета Республики Армения организуется в соответствии с законодательством Республики Армения. | 30. Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի բյուջետային հատկացումների հաշվին ուսուցումը կազմակերպվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: |

| IV. НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ УНИВЕРСИТЕТА | IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ |
|---|---|
| 31. Университет осуществляет научно-образовательную деятельность по основным образовательным программам, предусмотренными законодательством Сторон, следующих уровней: | 31. Համալսարանը իրականացնում է գիտակրթական գործունեություն Կողմ պետությունների օրենսդրությամբ նախատեսված հետևյալ մակարդակի հիմնական կրթական ծրագրերով. |
| 1) образовательные программы высшего образования: программы бакалавриата, специалитета, магистратуры, подготовки научно-педагогических кадров в аспирантуре, докторантуре; | 1) բարձրագույն կրթության կրթական ծրագրեր՝ բակալավրիատի, սպեցիալիտետի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում գիտամանկավարժական կադրերի պատրաստման ծրագրեր, |
| 2) образовательные программы среднего профессионального образования; | 2) միջին մասնագիտական կրթության կրթական ծրագրեր, |
| 3) основные общеобразовательные программы: программы начального общего образования, образовательные программы основного общего образования, образовательные программы среднего общего образования. | 3) հանրակրթական հիմնական ծրագրեր՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրեր, հիմնական ընդհանուր կրթական ծրագրեր, միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրեր: |
| 32. Университет реализует следующие дополнительные образовательные программы: | 32. Համալսարանն իրականացնում է հետևյալ լրացուցիչ կրթական ծրագրերը՝ |
| 1) дополнительные общеобразовательные программы; | 1) լրացուցիչ հանրակրթական ծրագրեր, |
| 2) дополнительные профессиональные программы: программы повышения квалификации, программы профессиональной переподготовки; | 2) լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրեր՝ որակավորման բարձրացման, մասնագիտական վերապատրաստման ծրագրեր, |
| 33. Лицам, освоившим образовательные программы в полном объеме и успешно прошедшим государственную итоговую аттестацию в соответствии с законодательством Российской Федерации, выдаются документы об образовании и (или) о квалификации или иные документы государств Сторон, а лицам, освоившим образовательные программы в полном объеме и успешно прошедшим государственную итоговую аттестацию в соответствии с законодательством Республики Армения, выдаются документы об образовании и (или) квалификации или иные документы Республики Армения. | 33. Կրթական ծրագրերը ամբողջ ծավալով յուրացրած և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան պետական ավարտական ատեստավորումը հաջողությամբ անցած անձանց տրվում են կրթության և (կամ) որակավորման մասին փաստաթղթեր կամ Կողմ պետությունների այլ փաստաթղթեր, իսկ կրթական ծրագրերը ամբողջ ծավալով յուրացրած և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան պետական ավարտական ատեստավորումը հաջողությամբ անցած անձանց տրվում են կրթության և (կամ) որակավորման մասին փաստաթղթեր կամ Հայաստանի Հանրապետության այլ փաստաթղթեր: |
| 34. Лицензирование образовательной деятельности в рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Российской Федерации, осуществляется в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения. | 34. Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում կրթական գործունեության լիցենզավորումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության և |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: |
| 35. Государственная аккредитация образовательной деятельности в рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Российской Федерации, осуществляется в соответствии с законодательством Российской Федерации. | 35. Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում կրթական գործունեության պետական հավատարմագրումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան: |
| 36. Лицензирование и аккредитация образовательной деятельности в рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Республики Армения, осуществляется в соответствии с законодательством Республики Армения. | 36. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում կրթական գործունեության լիցենզավորումը և հավատարմագրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: |
| 37. Уровень владения выпускниками Университета русским и армянским языками должен удовлетворять коммуникативные потребности и позволять вести профессиональную деятельность на русском и армянском языках в соответствии со специальностями, научными специальностями и направлениями подготовки. | 37. Համալսարանի շրջանավարտների՝ ռուսերեն և հայերեն լեզուների իմացության մակարդակը պետք է բավարարի հաղորդակցման կարիքներին և թույլ տա մասնագիտական գործունեություն ծավալել ռուսերեն և հայերեն լեզուներով՝ մասնագիտություններին, գիտական մասնագիտություններին և նախապատրաստական ուղղվածություններին համապատասխան: |
| 38. По отдельным профессиональным и дополнительным образовательным программам в целях удовлетворения потребностей обучающихся, а также привлечения иностранных обучающихся в рамках международного межуниверситетского взаимодействия Университет может вести обучение на иностранных языках в соответствии с законодательством Сторон. | 38. Առանձին մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրերով սովորողների կարիքները բավարարելու, ինչպես նաև միջազգային միջհամալսարանական փոխգործակցության շրջանակներում օտարերկրյա սովորողների ներգրավման նպատակով Համալսարանը կարող է վարել օտար լեզուներով ուսուցում՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան: |
| 39. Общие требования к организации в Университете образовательного процесса по образовательным программам различных уровней устанавливаются законодательством Сторон в области образования. | 39. Տարբեր մակարդակների կրթական ծրագրերով Համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպմանը ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանվում են կրթության բնագավառում Կողմերի օրենսդրությամբ: |
| 40. Университет в соответствии с лицензией и законодателсьтвом Сторон может реализовывать различные по срокам и уровню подготовки основные и дополнительные образовательные программы по очной, очно-заочной, заочной формам обучения, с полной и частичной трудоемкостью, в форме экстерната, с применением электронного обучения и дистанционных образовательных технологий. | 40. Համալսարանը, լիցենզիայի համաձայն, կարող է իրականացնել տարբեր ժամկետներով և պատրաստման մակարդակներրի հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրեր առկա, առկա-հեռակա, հեռակա ուսուցման ձևաչափով, լրիվ և մասնակի ծանրաբեռնվածությամբ, էքստեռնատի ձևաչափով, էլեկտրոնային ուսուցման և հեռահար կրթական տեխնոլոգիաների կիրառմամբ: |
| 41. Учебные занятия в Университете проводятся в виде лекций, консультаций, семинаров, практических занятий, лабораторных работ, контрольных, самостоятельных работ, коллоквиумов, учебной и научно- | 41. Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են դասախոսությունների, խորհրդատվությունների, սեմինարների, գործնական պարապմունքների, լաբորատոր, |

| | |
|---|---|
| исследовательской работы студентов, практики (учебной, производственной, включая преддипломную), курсового проектирования (курсовой работы), выпускной квалификационной работы (дипломного проекта или дипломной работы, аттестационной работы, магистерской диссертации), других видов учебных занятий, которые могут проводиться с применением электронного обучения и дистанционных образовательных технологий. | ստուգողական, ինքնուրույն աշխատանքների, ստուգազրույցների, ուսանողների ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների, պրակտիկայի (ուսումնական, արտադրական, այդ թվում՝ նախադիպլոմային), կուրսային նախագծման (կուրսային աշխատանքի), ավարտական որակավորման աշխատանքների (դիպլոմային նախագծի կամ դիպլոմային աշխատանքի, ատեստավորման աշխատանքների, մագիստրոսական թեզի), ուսումնական պարապմունքների այլ տեսակների տեսքով, որոնք կարող են անցկացվել նաև էլեկտրոնային և հեռավար ձևերով: |
| 42. Организация практики реализуется в организациях, осуществляющих деятельность по профилю соответствующих образовательных программ, на договорной основе, и непосредственно в структурных подразделениях Университета. | 42. Պրակտիկայի կազմակերպումն իրականացվում է համապատասխան կրթական ծրագրերի ոլորտային կազմակերպություններում, պայմանագրային հիմունքներով, և անմիջականորեն Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում: |
| 43. В целях организации учебного процесса по уровням и направлениям образовательных программ Университет создает необходимые соответствующие условия. | 43. Ուսումնական գործընթացը ըստ կրթական ծրագրերի մակարդակների և ուղղությունների կազմակերպելու նպատակով Համալսարանը ստեղծում է անհրաժեշտ համապատասխան պայմաններ: |
| 44. Порядок оценки академической успеваемости обучающихся и осуществления контроля знаний определяется локальными нормативными актами Университета. | 44. Ուսումնառողների ակադեմիական առաջադիմության գնահատման և գիտելիքների ստուգման իրականացման կարգը սահմանվում է Համալսարանի ներքին իրավական ակտերով: |
| 45. Перевод обучающихся с одной специальности/научной специальности, (направления подготовки), профессии и (или) формы обучения на другую, а также перевод студентов из других образовательных организаций высшего образования в Университет регулируются локальными нормативными актами Университета в соответствии с законодательством государств Сторон. | 45. Ուսումնառողների տեղափոխումը մեկ մասնագիտությունից (ուղղությունից) մյուսը և կամ ուսուցման մեկ ձևից մյուսը կարգավորվում են Համալսարանի ներքին իրավական ակտերով, Կողմ պետությունների օրենսդրությանը համապատասխան: |
| 46. Порядок отчисления и восстановления обучающихся регулируется локальными нормативными актами Университета в соответствии с законодательством Сторон. | 46. Ուսումնառողների հեռացման և վերականգնման կարգը սահմանվում է Համալսարանի ներքին իրավական ակտերով՝ Կողմ պետությունների օրենսդրությանը համապատասխան: |
| 47. Государственная итоговая аттестация обучающихся Университета проводится согласно локальным нормативным актам Университета в соответствии с законодательством Сторон. | 47. Համալսարանի շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է Համալսարանի ներքին իրավական ակտերի համաձայն՝ Կողմ պետությունների օրենսդրությանը համապատասխան: |
| 48. Лицам, не прошедшим итоговую аттестацию, а также лицам, освоившим часть образовательной программы и отчисленным из Университета, выдается академическая справка об обучении или о периоде обучения по установленному Университету образцу. | 48. Բարձրագույն կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք: |

| | |
|---|---|
| | |
| 49. Университет вправе осуществлять образовательную деятельность за счет средств физических и (или) юридических лиц по договорам об оказании платных образовательных услуг. | 49. Համալսարանն իրավունք ունի վճարովի կրթական ծառայությունների մատուցման պայմանագրերով իրականացնել կրթական գործունեություն ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց միջոցների հաշվին: |
| **V. НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКАЯ, НАУЧНО-ТЕХНИЧЕСКАЯ И ИННОВАЦИОННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ УНИВЕРСИТЕТА** | **V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ** |
| 50. Приоритетами Университета в научной, научно-исследовательской и научно-технической областях являются:<br>1) развитие наук посредством научных исследований и творческой деятельности научных, научно-педагогических и педагогических работников и обучающихся;<br>2) поддержка и стимулирование фундаментальных и прикладных научных исследований по приоритетным направлениям развития науки;<br>3) получение новых знаний, становление и развитие научных и докторских школ и ведущих научных коллективов по важнейшим направлениям науки и техники;<br>4) создание опережающего научного задела по основным направлениям научной деятельности Университета;<br>5) обеспечение всеобщего образовательного и научного процессов, подготовка квалифицированных специалистов и научно-педагогических кадров высшей квалификации на основе новейших достижений научно-технического прогресса;<br>6) формирование и выполнение, совместно с другими научными и образовательными организациями, проектов, научных исследований по приоритетным направлениям;<br>7) проведение научных исследований, экспериментальных разработок, экспертных, аналитических работ, а также распространение современных научных знаний;<br>8) содействие развитию международного научного сотрудничества;<br>9) научно-методическое и кадровое обеспечение развития науки и образования Сторон и обеспечение конкурентоспособности Университета по отношению к ведущим зарубежным образовательным и научным центрам;<br>10) распространение зарубежного и (или) накопленного в Университете научного и образовательного опыта путем издания научных | 50. Համալսարանի առաջնահերթությունները գիտական, գիտահետազոտական և գիտատեխնիկական ոլորտներում (այսուհետ տեքստում ՝ գիտական) հանդիսանում են.<br>1) գիտությունների զարգացում՝ գիտական հետազոտությունների և գիտամանկավարժական աշխատողների ու ուսումնառողների ստեղծագործական գործունեության միջոցով,<br>2) գիտության զարգացման գերակա ուղղություններով հիմնարար և կիրառական հետազոտությունների աջակցություն և խրախուսում,<br>3) գիտության և տեխնիկայի կարևորագույն ուղղություններով նոր գիտելիքների ձեռքբերում, գիտական և դոկտորական դպրոցների ու առաջատար գիտական կոլեկտիվների ձևավորում և զարգացում,<br>4) Համալսարանի գիտական գործունեության հիմնական ուղղություններով առաջատար գիտական հենքի ստեղծում,<br>5) կրթական և գիտական գործընթացների համընդհանուր ապահովում, գիտական և տեխնոլոգիական առաջընթացի նորագույն ձեռքբերումների հիման վրա բարձրագույն որակավորման որակյալ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի նախապատրաստում,<br>6) այլ կրթագիտական կազմակերպությունների հետ համատեղ առաջնահերթ ուղղություններով գիտական ծրագրերի նախագծում և իրականացում,<br>7) գիտական հետազոտությունների, փորձարարական մշակման, փորձագիտական և վերլուծական աշխատանքների իրականացում, ինչպես նաև ժամանակակից գիտական գիտելիքների տարածում<br>8) աջակցություն միջազգային գիտական համագործակցության զարգացմանը,<br>9) գիտության և կրթության զարգացման գիտական, մեթոդական և կադրային աջակցությունը Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի |

| | |
|---|---|
| монографий, учебников, учебных пособий, научных сборников, научных периодических изданий и другой издательской продукции на русском и иностранных языках;<br>11) содействие распространению инновационных практик;<br>12) управление правами на результаты интеллектуальной деятельности, в том числе полученные в рамках выполнения научно-исследовательских; опытно-конструкторских и технологических работ, включая использование таких результатов и получение доходов от распоряжения правами;<br>13) обеспечение практического внедрения результатов интеллектуальной деятельности, полученных Университетом, в том числе за счет их коммерциализации. | Դաշնությունում, ապահովելով Համալսարանի մրցունակությունը արտասահմանյան առաջատար կրթական և գիտական կենտրոնների նկատմամբ:<br>10) Համալսարանում արտասահմանյան և/կամ կուտակված գիտակրթական փորձի տարածումը՝ գիտական մենագրությունների, դասագրքերի, ուսումնական նյութերի, գիտական ժողովածուների, գիտական պարբերականների և այլ հրատարակված արտադրանքի ռուսերեն և օտար լեզուներով հրատարակման միջոցով:<br>11) նորարարական փորձի տարածման խթանումը:<br>12) մտավոր սեփականության իրավունքների կառավարումը, այդ թվում՝ հետազոտությունների, զարգացման և տեխնոլոգիական աշխատանքների միջոցով ձեռք բերվածների, այդ թվում՝ նման արդյունքների օգտագործումը և իրավունքների օտարումից եկամուտների ստացումը:<br>13) Համալսարանի կողմից ձեռք բերված մտավոր սեփականության գործնական կիրառման ապահովումը, այդ թվում՝ դրանց առևտրայնացման միջոցով: |
| 51. Научно-исследовательская, научно-техническая и инновационная деятельность, осуществляемая Университетом, финансируется за счет средств федерального бюджета Российской Федерации и государственного бюджета Республики Армения, а также из внебюджетных средств Университета и других источников, предусмотренных законодательствами Сторон. Университет реализует научные и научно-технические проекты, в том числе совместно с армянскими и российскими образовательными и научными организациями. | 51. Համալսարանի կողմից իրականացվող գիտական և նորարարական գործունեությունը ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների, ինչպես նաև Համալսարանի արտաբյուջետային միջոցների և Կողմերի օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների հաշվին:<br>Համալսարանն իրականացնում է գիտական և գիտատեխնիկական նախագծեր այդ թվում՝ հայկական և ռուսական կրթական և գիտական կազմակերպությունների հետ համատեղ: |
| 52. Университет может участвовать в грантовых программах Сторон в соответствии с законодательством Сторон. | 52. Համալսարանը, Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող է մասնակցել դրամաշնորհային ծրագրերին: |
| 53. Подготовка научно-педагогических и научных кадров осуществляется в аспирантуре и докторантуре Университета в соответствии с действующим законодательством Сторон.<br>Порядок подготовки научно-педагогических и научных кадров в системе высшего образования утверждается соответствующими органами государственной власти Сторон. | 53. Գիտամանկավարժական և գիտական կադրերի պատրաստումն իրականացվում է Համալսարանի ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում՝ Կողմերի գործող օրենսդրությանը համապատասխան: Բարձրագույն կրթության համակարգում գիտամանկավարժական և գիտական կադրերի պատրաստման կարգը հաստատվում է Կողմերի պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից: |
| 54. Число лиц, принимаемых в аспирантуру и докторантуру Университета за счет бюджетных средств, а также порядок их приема | 54. Բյուջետային միջոցների հաշվին Համալսարանի ասպիրանտուրա և դոկտորանտուրա ընդունվողների թիվը և դրանց ընդունելության |

| | |
|---|---|
| устанавливаются ежегодно Уполномоченными органами Сторон. | կարգը սահմանվում են յուրաքանչյուր տարի, Կողմերի իրավասու մարմինների կողմից: |
| 55. Университет вправе осуществлять прием в аспирантуру и докторантуру для подготовки диссертации на соискание ученой степени кандидата наук, на соискание ученой степени доктора наук на основании договоров, заключаемых с юридическими и (или) физическими лицами при условии оплаты ими стоимости обучения. | 55. Համալսարանն իրավունք ունի ընդունել ուսանողների ասպիրանտուրայի և դոկտորական ուսման համար՝ գիտությունների թեկնածուի, գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար ատենախոսություն պատրաստելու համար՝ իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա՝ նրանց կողմից ուսման վարձի վճարման պայմանով: |
| 56. На базе Университета создаются советы по защите диссертаций на соискание ученой степени кандидата наук, на соискание ученой степени доктора наук в соответствии с законодательством Сторон. | 56. Համալսարանի հիմքի վրա ստեղծվում են գիտությունների թեկնածուի և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար ատենախոսությունների պաշտպանության խորհուրդներ՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան: |
| **VI. СТРУКТУРА УНИВЕРСИТЕТА** | **VI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ** |
| 57. Структура Университета представляется Ректором и утверждается Управляющим советом, действующим на основании положения, утвержденного Уполномоченными органами Сторон. | 57. Համալսարանի կառուցվածքը ներկայացնում է Ռեկտորը և հաստատվում Կառավարման խորհրդի կողմից, որը գործում է Կողմերի Լիազոր մարմինների կողմից հաստատված կանոնակարգի հիման վրա: |
| 58. Университет самостоятельно устанавливает штатное расписание, исходя из объема и форм реализуемых образовательных программ, оказываемых услуг и выполняемых работ, определяет численность работников в структурных подразделениях и осуществляет прием работников, заключение и расторжение с ними трудовых договоров, распределение должностных обязанностей. | 58. Համալսարանն ինքնուրույն սահմանում է հաստիքացուցակը՝ ելնելով իրականացվող կրթական ծրագրերի, մատուցվող ծառայությունների և կատարվող աշխատանքների ծավալից և ձևերից, որոշում է կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողների թիվը և իրականացնում է աշխատողների ընդունելություն, նրանց հետ աշխատանքային պայմանագրերի կնքում և լուծում, ծառայողական պարտականությունների բաշխում: Համալսարանի հաստիքացուցակը հաստատվում է Ռեկտորի կողմից: |
| 59. Организация и реализация научно-исследовательской деятельности в Университете осуществляется соответствующими структурными подразделениями, научно-исследовательскими институтами и центрами, научными группами, лабораториями и кафедрами. | 59. Համալսարանում գիտահետազոտական գործունեության կազմակերպումն ու իրականացումն իրագործվում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների, գիտահետազոտական ինստիտուտների և կենտրոնների, գիտական խմբերի, լաբորատորիաների և ամբիոնների միջոցով: |
| 60. В состав Университета могут входить различные структурные подразделения, обеспечивающие осуществление образовательной, научной и иной деятельности с учетом уровня, вида и направленности реализуемых образовательных программ, формы обучения и режима пребывания обучающихся.<br>В состав Университета также могут входить объекты производственной и социальной | 60. Համալսարանի կազմում կարող են ընդգրկվել կրթական, գիտական և այլ գործունեության իրականացումն ապահովող տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներ՝ հաշվի առնելով իրականացվող կրթական ծրագրերի մակարդակը, տեսակը և ուղղվածությունը, սովորողների ուսուցման ձևը և կեցության կարգը:<br>Կողմ պետությունների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում Համալսարանի |

| | |
|---|---|
| инфраструктуры в рамках реализуемых программ Сторон. | կազմի մեջ կարող են ներառվել նաև արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների օբյեկտներ: |
| 61. Институт является учебно-научным структурным подразделением, объединяющим группу кафедр, реализующих смежные образовательные программы и преподавание профильных дисциплин, а также иные научные и учебные подразделения.<br><br>Институт:<br>1) планирует и организует учебную, учебно-методическую, научную работу;<br>2) организует повышение квалификации и переподготовку специалистов;<br>3) реализует профессиональные образовательные программы по соответствующим направлениям подготовки, специальностям и научным специльстям;<br>4) ведет учет контингента обучающихся Института и их академической успеваемости;<br>5) организует воспитательную работу обучающихся и формирование/ развитие у обучающихся общечеловеческих ценностей;<br>6) организует профориентационную работу с потенциальными абитуриентами и обучающимися и поддерживает связь с выпускниками Института;<br>7) координирует научную деятельность Института;<br>8) в установленном порядке обеспечивает делопроизводство и документооборот Института.<br>Институт создается, реорганизуется и ликвидируется решением Управляющего совета по представлению Ректора Университета.<br>Институт возглавляет назначаемый ректором директор. Порядок назначения директора Института, а также основные задачи, компетенция, права, формы управления и ответственность Института, его взаимоотношения с другими подразделениями Университета и иные вопросы, касающиеся деятельности Института, регулируются отдельным Положением об Институте, утверждаемым Ученым советом. | 61. Ինստիտուտը հանդիսանում է ուսումնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որը միավորվում է հարակից կրթական ծրագրեր իրականացնող և պրոֆիլային առարկաներ դասավանդող ամբիոնների խումբը, ինչպես նաև գիտական և ուսումնական այլ ստորաբաժանումներ:<br><br>Ինստիտուտը.<br>1) պլանավորում և կազմակերպում է ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական,<br>2) կազմակերպում է մասնագետների որակավորման բարձրացում և վերապատրաստում,<br>3) իրականացնում է մասնագիտական կրթական ծրագրեր համապատասխան ուղղություններով և մասնագիտություններով,<br>4) վարում է ինստիտուտի ուսանողների համակազմի և նրանց ակադեմիական առաջադիմության հաշվառում,<br>5) կազմակերպում է դաստիարակչական աշխատանքը ուսումնառողների շրջանում համամարդկային արժեքների ձևավորում/զարգացում,<br>6) կազմակերպում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ պոտենցիալ դիմորդների և ուսանողների հետ և պահպանում է կապերը Ինստիտուտի շրջանավարտների հետ,<br>7) համակարգում է Ինստիտուտի գիտական գործունեությունը,<br>8) սահմանված կարգով ապահովում է Ինստիտուտի գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը,<br>Ինստիտուտը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է կառավարման խորհրդի որոշմամբ՝ համալսարանի ռեկտորի ներկայացմամբ: Ինստիտուտը ղեկավարում է ռեկտորի կողմից նշանակված տնօրենը: Ինստիտուտի տնօրենի նշանակման կարգը, Ինստիտուտի հիմնական խնդիրները, իրավասությունները, իրավունքները, կառավարման ձևերը և պատասխանատվությունը, նրա փոխհարաբերությունները Համալսարանի այլ ստորաբաժանումների հետ, ինչպես նաև Ինստիտուտի գործունեությանը վերաբերող այլ հարցերը կարգավորվում են Գիտական խորհրդի կողմից հաստատվող Ինստիտուտի մասին առանձին կանոնակարգով: |
| 62. Кафедра является основным учебно-научным структурным подразделением Университета, осуществляющим учебную, учебно- | 62. Ամբիոնը Համալսարանի հիմնական ուսումնագիտական կառուցվածքային ստորաբաժանումն է, որն իրականացնում է |

методическую, научно-методическую работу по одной или нескольким смежным дисциплинам, научные исследования, а также подготовку научно-педагогических кадров и повышение их квалификации. Кафедра, как правило, входит в состав Института по смежным направлениям подготовки специалистов.

Кафедра:

1) проводит все виды учебных занятий и учебной работы по всем формам обучения;
2) разрабатывает учебные планы по направлениям подготовки (специальностям, научным специальностям), календарные учебные графики, рабочие программы по дисциплинам, закрепленным за кафедрой, всех видов практик, программы итоговой аттестации выпускников Университета;
3) осуществляет комплексное методическое обеспечение всех учебных дисциплин, закрепленных за кафедрой, всех видов практик, дипломных работ и итоговой аттестации;
4) обеспечивает высокий профессиональный уровень проведения лекционных, практических, семинарских и лабораторных занятий, рационально организует самостоятельную работу обучающихся;
5) организует и осуществляет государственную итоговую аттестацию (итоговую аттестацию) обучающихся по закрепленным за кафедрой направлениям подготовки (специальностям, научным специальностям) по всем формам обучения;
6) осуществляет подготовку и повышение квалификации научно-педагогических кадров, привлекает к педагогической деятельности ведущих ученых и специалистов научных организаций и предприятий;
7) организует научную деятельность по профилю кафедры, фундаментальные, методические, педагогические и прикладные научные исследования;
8) осуществляет сотрудничество с кафедрами иных образовательных организаций высшего образования в области научной и образовательной деятельности, осуществляемой на кафедре;
9) участвует в профориентационной работе с обучающимися, в организации набора и приема абитуриентов;
10) обеспечивает делопроизводство и документооборот кафедры.

Кафедра создается, реорганизуется и ликвидируется решением Управляющего совета по представлению Ректора Университета.

ուսումնական, ուսումնամեթոդական, գիտամեթոդական աշխատանքներ մեկ կամ մի քանի հարակից առարկաների շրջանակներում, գիտական հետազոտություններ, ինչպես նաև գիտամանկավարժական կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում: Ամբիոնը, որպես կանոն, մասնագետների կրթական ծրագրերի հարակից ուղղություններով ընդգրկվում է Ինստիտուտի կազմում:

Ամբիոնը.

1) իրականացնում է բոլոր տեսակի ուսումնական պարապմունքներ և ուսումնական աշխատանքներ ուսումնառության բոլոր ձևերով,
2) մշակում է ուսումնական ծրագրեր ըստ ուղղությունների (մասնագիտությունների), ուսումնական գործընթացի ժամանակացույցեր, ամբիոնին ամրացված առարկաների, բոլոր տեսակի պրակտիկաների աշխատանքային ծրագրեր, Համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ծրագրեր
3) իրականացնում է ամբիոնին ամրացված բոլոր ուսումնական առարկաների, բոլոր տեսակի պրակտիկաների, դիպլոմային աշխատանքների և ամփոփիչ ատեստավորման համալիր մեթոդական ապահովում
4) ապահովում է դասախոսությունների, գործնական, սեմինարների և լաբորատոր պարապմունքների անցկացման մասնագիտական բարձր մակարդակ, ռացիոնալ կերպով կազմակերպում է ուսանողների ինքնուրույն աշխատանքը,
5) կազմակերպում և իրականացնում է շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը ամբիոնին ամրակցված ուղղություններով (մասնագիտություններով) ուսուցման բոլոր ձևերով,
6) իրականացնում է գիտամանկավարժական կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում, մանկավարժական գործունեության մեջ ներգրավում է գիտական հաստատությունների և ձեռնարկությունների առաջատար գիտնականներին և մասնագետներին
7) կազմակերպում է գիտական գործունեություն ըստ ամբիոնի ուղղվածության, հիմնարար, մեթոդական, մանկավարժական և կիրառական գիտական հետազոտություններ, ,
8) իրականացնում է համագործակցություն այլ բարձրագույն կրթության կրթական հաստատությունների ամբիոնների հետ՝ ամբիոնում իրականացվող գիտական և ուսումնական գործունեության բնագավառում,

| | | |
|---|---|---|
| | Кафедру возглавляет заведующий, избираемый на конкурсной основе, в соответствии с порядком, установленным локальным нормативным актом Университета.<br>Деятельность заведующего кафедрой считается научно-педагогической работой.<br>Основные задачи, компетенция, права, формы управления и ответственность кафедры, ее взаимоотношения с другими подразделениями Университета определяются положением о кафедре, утверждаемым Ученым советом. В Университете могут создаваться кафедры и другие структурные подразделения образовательных и (или) научных организаций Сторон и других государств по согласованию с Уполномоченными органами Сторон на основании соглашений между Университетом и соответствующими организациями. | 9) մասնակցում է սովորողների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին, ըստ մասնագիտությունների դիմորդների հավաքագրմանը և ընդունելության կազմակերպմանը,<br>10) ապահովում է ամբիոնի գործավարություն և փաստաթղթաշրջանառություն:<br><br>Ամբիոնը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ՝ Համալսարանի Կառավարման խորհրդի որոշմամբ:<br>Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը՝ որն ընտրվում է Համալսարանի ներքին նորմատիվ ակտերով սահմանված կարգով:<br>Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:<br>Ամբիոնի հիմնական խնդիրները, իրավասությունները, իրավունքները, կառավարման ձևերը և պատասխանատվությունը, նրա փոխհարաբերությունները Համալսարանի այլ ստորաբաժանումների հետ սահմանվում են Համալսարանի Գիտական խորհրդի կողմից հաստատվող կանոնակարգի համաձայն: Համալսարանում կարող են ստեղծվել Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների կրթական և (կամ) գիտական կազմակերպությունների ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ՝ Կողմերի լիազոր մարմինների համաձայնությամբ Համալսարանի և համապատասխան կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերի հիման վրա: |
| 63. | Издательские функции Университета осуществляет издательство, являющееся структурным подразделением Университета.<br>Издательство в установленном порядке издает учебную, учебно-методическую литературу, отвечающую требованиям образовательного и научного процесса, а также выпускает научную, справочную и другую литературу в интересах обеспечения учебного процесса и научно-исследовательской деятельности.<br>Университет издает научный журнал и может выпускать другие печатные издания. | 63. Համալսարանի հրատարակչական գործառույթները իրականացնում է Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող հրատարակչությունը:<br>Հրատարակչությունը սահմանված կարգով հրատարակում է ուսումնական, ուսումնամեթոդական գրականություն, որը ապահովում է կրթական և գիտական գործընթացի պահանջները, ինչպես նաև ուսումնական գործընթացի և գիտահետազոտական գործունեության ապահովման նպատակով հրատարակում է գիտական, տեղեկատու և այլ գրականություն:<br>Համալսարանը հրատարակում է գիտական ամսագիր և կարող է հրատարակել այլ տպագիր հրատարակություններ: |
| 64. | Университет может создавать филиалы и (или) представительства, расположенные вне места нахождения Университета в качестве обособленных структурных подразделений, в | 64. Համալսարանը կարող է ունենալ իր գտնվելու վայրից դուրս տեղակայված մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչություններ: Մասնաճյուղն ինքնուրույն է իրականացնում Համալսարանի բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը: |

| | |
|---|---|
| порядке, установленном законодательством Республики Армения.<br>Филиал Университета создается, реорганизуется, переименовывается и ликвидируется решением Управляющего совета по представлению Ректора Университета.<br>Университет может создавать представительства, представляющие интересы Университета. Представительства создаются и ликвидируются решением Управляющего совета по представлению Ректора Университета. | Համալսարանի մասնաճյուղը, ստեղծվում, վերակազմակերպվում, վերանվանվում և լուծարվում է Համալսարանի Կառավարման խորհրդի որոշմամբ, Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ:<br>Համալսարանը կարող է ստեղծել Ներկայացուցչություն: Ներկայացուցչությունը ստեղծվում է լուծարվում է Համալսարանի Կառավարման խորհրդի որոշմամբ, Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ: |
| 65. Деятельность структурного подразделения, расположенного в месте нахождения Университета, отдельно не лицензируется, его деятельность осуществляется на основании и в пределах выданных Университету лицензий. | 65. Համալսարանի գտնվելու վայրում տեղակայված կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունն առանձին չի լիցենզավորվում, նրա գործունեությունն իրականացվում է Համալսարանին տրված լիցենզիաների հիման վրա և սահմաններում: |
| 66. В составе Университета в качестве структурного подразделения, осуществляющего в рамках его уставной деятельности образовательную, научную либо научно-исследовательскую деятельность, могут быть созданы Институт и (или) Научно-исследовательский институт (далее – Институт), колледж, дошкольные учреждения, гимназия, лицей и др.<br>Создание и ликвидация этих подразделений производятся Ректором на основании решения Управляющего совета.<br>В состав Университета в качестве структурного подразделения входит общеобразовательная школа, не являющаяся самостоятельным юридическим лицом. Положение об общеобразовательной школе утверждается Ректором. | 66. Համալսարանի կազմում, որպես նրա կանոնադրական գործունեության շրջանակներում կրթական, գիտական կամ գիտահետազոտական գործունեություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում, կարող են ստեղծվել Ինստիտուտ և (կամ) Գիտահետազոտական ինստիտուտ (այսուհետ ՝ Ինստիտուտ), քոլեջ, նախադպրոցական հիմնարկներ, վարժարան, ճեմարան և այլն:<br>Այդ ստորաբաժանումների ստեղծումը և լուծարումը իրականացվում է Ռեկտորի կողմից Կառավարման խորհրդի որոշման հիման վրա:<br>Համալսարանի կազմի մեջ, որպես կառուցվածքային ստորաբաժանում, մտնում է ինքնուրույն իրավաբանական անձ չհանդիսացող հանրակրթական դպրոցը: Հանրակրթական դպրոցի կանոնակարգը հաստատում է Ռեկտորը: |
| 67. В Университете в качестве структурного подразделения действует Музей с целью хранения, изучения и публичного представления путем показа, воспроизведения в печатных изданиях, на электронных и других видах носителей документов и материалов, связанных с историей создания и деятельности Университета. | 67. Համալսարանում, որպես կառուցվածքային ստորաբաժանում, գործում է թանգարան՝ Համալսարանի ստեղծման և գործունեության պատմության հետ կապված փաստաթղթերի և նյութերի ցուցադրման, տպագիր հրատարակություններում վերարտադրման միջոցով, էլեկտրոնային և այլ տեսակի կրիչների միջոցով պահելու, ուսումնասիրելու և հրապարակային ներկայացնելու նպատակով: |
| 68. Университет может иметь структурные подразделения дополнительного профессионального образования, объекты производственной и социальной инфраструктуры, типографию, общежитие и другие структурные подразделения. | 68. Համալսարանը կարող է ունենալ լրացուցիչ մասնագիտական կրթության կառուցվածքային ստորաբաժանում, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների օբյեկտներ, տպարան, հանրակացարան և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ: |

| | |
|---|---|
| 69. В Университете создаются другие структурные подразделения, деятельность которых направлена на обеспечение управления деятельностью Университета в целом и по отдельным направлениям. Положения об этих подразделениях, должностные обязанности их руководителей и работников утверждает Ректор. | 69. Համալսարանում ստեղծվում են այլ կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնց գործունեությունն ուղղված է Համալսարանի՝ որպես ամբողջության և ըստ առանձին ուղղությունների գործունեության կառավարման ապահովմանը: Ռեկտորը հաստատում է այդ ստորաբաժանումների վերաբերյալ կանոնակարգերը, դրանց ղեկավարների և աշխատողների աշխատանքային պարտականությունները: |
| 70. Структурное подразделение Университета не является юридическим лицом. Правовой статус, функции и полномочия структурных подразделений Университета определяются положениями о них, утверждаемыми в порядке, установленном настоящим Уставом. | 70. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումը իրավաբանական անձ չէ: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների իրավական կարգավիճակը, գործառույթներն ու լիազորությունները որոշվում են դրանց վերաբերյալ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաստատվող կանոնակարգերով: |
| 71. Размещение на территории Университета международных или иностранных организаций, за исключением российских организаций, осуществляется решением Ректора по согласованию с Управляющим советом. | 71. Համալսարանի տարածքում, բացառությամբ ռուսական կազմակերպությունների, միջազգային կամ արտասահմանյան կազմակերպությունների տեղակայումը իրականացվում է Ռեկտորի որոշմամբ՝ Կառավարման խորհրդի համաձայնությամբ: |
| **VII. ОРГАНИЗАЦИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ И УПРАВЛЕНИЕ УНИВЕРСИТЕТОМ** | **VII. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ** |
| 72. Университет обладает автономией, под которой понимается самостоятельность в осуществлении образовательной, научной, научно-технической, инновационной, административной, финансово-экономической, инвестиционной деятельности, в разработке и принятии локальных нормативных актов в соответствии с законодательством Сторон и иными нормативными правовыми актами, Соглашением, настоящим Уставом, и несет ответственность за свою деятельность перед обучающимся, университетским сообществом и Сторонами. | 72. Համալսարանն ունի ինքնավարություն, որի ներքո հասկացվում է անկախություն կրթական, գիտական, գիտատեխնիկական, նորարարական, վարչական, ֆինանսատնտեսական, ներդրումային գործունեության իրականացման գործում, Կողմերի օրենսդրությանը և այլ նորմատիվ իրավական ակտերին, Համաձայնագրին, սույն Կանոնադրությանը համապատասխան ներքին իրավական ակտերի մշակման և ընդունման գործում, և պատասխանատու է իր գործունեության համար ուսանողի, համալսարանական համայնքի և Կողմերի առջև: |
| 73. Управление Университетом осуществляется в соответствии с законодательством Сторон, Соглашением и настоящим Уставом на основе сочетания принципов единоначалия и коллегиальности. | 73. Համալսարանի կառավարումն իրականացվում է Կողմերի օրենսդրությանը, Համաձայնագրին և սույն Կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների համադրման հիման վրա: |
| 74. Уполномоченными органами Сторон являются:<br>1) от Армянской Стороны – Министерство образования, науки, культуры и спорта Республики Армения (далее – Уполномоченный орган от Армянской Стороны);<br>2) от Российской Стороны – Министерство науки и высшего образования Российской | 74. Կողմերի լիազորված մարմիններն են՝<br>1) Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապե-տության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Հայ -կական Կողմից Լիազորված մարմին). |

| | |
|---|---|
| Федерации (далее – Уполномоченный орган от Российской Стороны).<br><br>Об изменении наименования Уполномоченного органа и (или) передаче его функций другому органу (другим органам) государственной власти одна Сторона незамедлительно направляет другой Стороне письменное уведомление по дипломатическим каналам. | 2) Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության Գիտության և բարձրագույն կրթության նախարարությունը (այսուհետ՝ Ռուսական Կողմից Լիազորված մարմին):<br><br>Լիազորված մարմնի անվան փոփոխության և (կամ) նրա գործառույթները պետական կառավարման մեկ այլ մարմնին (այլ մարմիններին) փոխանցելու մասին Կողմն անհապաղ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում է ուղարկում մյուս Կողմին: |
| 75. Органами управления Университетом являются Управляющий совет, Ученый совет и Ректор. | 75. Համալսարանի կառավարման մարմիններն են Կառավարման խորհուրդը, Գիտական խորհուրդը և Ռեկտորը: |
| 76. Управляющий совет является постоянно действующим высшим коллегиальным органом управления Университета. | 76. Կառավարման խորհուրդը Համալսարանի մշտապես գործող բարձրագույն կոլեգիալ կառավարման մարմինն է: |
| 77. Управляющий совет состоит из 12 членов: по 4 представителя от каждого Уполномоченного органа Сторон, а также 4 представителя от Университета с правом совещательного голоса. | 77. Կառավարման խորհուրդը բաղկացած է 12 անդամից՝ 4 ներկայացուցիչ յուրաքանչյուր Լիազորված մարմնից և 4 ներկայացուցիչ Համալսարանից՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: |
| 78. Представители Университета рекомендуются Ученым советом Университета в соответствии с настоящим Уставом и согласовываются Уполномоченными органами Сторон. | 78. Համալսարանի ներկայացուցիչները առաջարկվում են Համալսարանի Գիտական խորհրդի կողմից՝ համաձայն Կանոնադրության, և համաձայնեցվում են Լիազորված մարմինների կողմից: |
| 79. Представители Университета, входящие в состав Управляющего совета, не могут занимать руководящие должности в Университете. | 79. Կառավարման խորհրդի կազմում ընդգրկված Համալսարանի ներկայացուցիչները Համալսարանում չեն կարող զբաղեցնել ղեկավար պաշտոններ: |
| 80. Состав Управляющего совета утверждается совместным приказом Уполномоченных органов Сторон. | 80. Կառավարման խորհրդի կազմը հաստատվում է Կողմերի Լիազորված մարմինների համատեղ հրամանով: |
| 81. Уполномоченные органы Сторон информируют друг друга по дипломатическим каналам о кандидатурах своих представителей с целью формирования или внесения изменений в состав Управляющего совета. Университет письменно уведомляет Уполномоченные органы Сторон о кандидатурах своих представителей с целью формирования или внесения изменений в состав Управляющего совета. | 81. Կողմերի Լիազորված մարմինները դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնում են իրենց ներկայացուցիչների թեկնածությունների մասին՝ Կառավարման խորհրդի կազմը ձևավորելու կամ դրանում փոփոխություններ կատարելու նպատակով: Համալսարանը Կողմերի Լիազորված մարմիններին գրավոր տեղեկացնում է իր ներկայացուցիչների թեկնածությունների մասին՝ Կառավարման խորհրդի կազմը ձևավորելու կամ դրանում փոփոխություններ կատարելու նպատակով: |
| 82. Руководство деятельностью Управляющего совета осуществляют 2 сопредседателя, назначаемые руководителями Уполномоченных органов Сторон из числа своих представителей, входящих в состав Управляющего совета. | 82. Կառավարման խորհրդի գործունեությունը ղեկավարում են 2 համանախագահները, որոնք նշանակվում են Կողմերի Լիազորված մարմինների ղեկավարների կողմից՝ Կառավարման խորհրդի կազմում անդամ հանդիսացող իրենց ներկայացուցիչների կազմից: |
| 83. Управляющий совет утверждает структуру и бюджет Университета, годовой финансовый отчет Университета, годовой отчет о деятельности | 83. Կառավարման խորհուրդը հաստատում է Համալսարանի կառուցվածքը և բյուջեն, Համալսարանի տարեկան ֆինանսական հաշվետվությունը, Համալսարանի |

| | |
|---|---|
| Университета, стратегическую программу Университета, а также рассматривает иные вопросы, связанные с реализацией Соглашения. | գործունեության տարեկան հաշվետվությունը, Համալսարանի ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև քննարկում է Համաձայնագրի իրագործման հետ կապված այլ հարցեր: |
| 84. Иные полномочия Управляющего совета определяются положением об Управляющем совете, утверждаемым Уполномоченными органами Сторон. | 84. Կառավարման խորհրդի այլ լիազորությունները սահմանվում են Կառավարման խորհրդի կանոնակարգով, որը հաստատում են Լիազորված մարմինները: |
| 85. Ученый совет, являющийся постоянно действующим органом коллегиального управления Университета, формируется из представителей научно-педагогического состава, администрации в лице ректора, проректоров и директоров институтов Университета по должности, профсоюзных и студенческих общественных организаций и обучающихся Университета.<br>Для формирования Ученого совета созывается Конференция (собрание представителей всех структурных подразделений и обучающихся). Конференция функционирует в соответствии с Положением о Конференции, утверждаемым Ученым советом.<br>Ученый совет занимается решением вопросов текущего и перспективного развития академической деятельности Университета и действует сроком на 5 лет. Представители администрации Университета не могут составлять более 30% общего состава Ученого совета.<br>Структура, порядок формирования, полномочия и порядок деятельности Ученого совета определяются настоящим Уставом. | 85. Գիտական խորհուրդը՝ Համալսարանի մշտական գործող կոլեգիալ կառավարման մարմինը, ձևավորվում է գիտամանկավարժական անձնակազմի, վարչակազմի ներկայացուցիչներից՝ ի դեմս ի պաշտոնե Համալսարանի ռեկտորի, պրոռեկտորների, ինստիտուտների տնօրենների ու Համալսարանի ուսումնառուների: Գիտական խորհրդի ձևավորման նպատակով հրավիրվում է Կոնֆերանս (Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների և ուսումնառողների ներկայացուցիչներից կազմված ժողով): Կոնֆերանսը գործում է Գիտական խորհրդի կողմից հաստատված Կանոնակարգի համաձայն:<br>Գիտական խորհուրդը զբաղվում է Համալսարանի ակադեմիական գործունեության ընթացիկ և հեռանկարային զարգացման հարցերով և գործում է 5 տարի ժամկետով: Համալսարանի վարչակազմի ներկայացուցիչները չեն կարող կազմել Գիտական խորհրդի ընդհանուր կազմի 30% - ից ավելին:<br>Գիտական խորհրդի կառուցվածքը, ձևավորման կարգը, լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Կանոնադրությամբ: |
| 86. Число членов Ученого совета, нормы представительства в Ученом совете от структурных подразделений и обучающихся, порядок избрания, формирования и деятельности Ученого совета определяются Положением об Ученом совете. | 86. Գիտական խորհրդի անդամների թիվը, կառուցվածքային ստորաբաժանումներից և ուսանողներից Գիտական խորհրդում ներկայացվածության նորմերը, Գիտական խորհրդի ընտրության, ձևավորման և գործունեության կարգը սահմանվում են Գիտական խորհրդի մասին Կանոնակարգով: |
| 87. Подготовку заседаний Ученого совета Университета, контроль за реализацией его решений и координацию взаимодействия Ученого совета и структурных подразделений Университета в соответствии с полномочиями Ученого совета осуществляет Ученый секретарь: | 87. Գիտական խորհրդի նիստերի նախապատրաստումը, նրա որոշումների կատարման հսկողությունը, Գիտական խորհրդի և կառուցվածքային ստորաբաժանումների փոխգործակցության համակարգումը իրականացնում է գիտական քարտուղարը: |
| 88. Положение об Ученом совете утверждается действующим Ученым советом Университета по согласованию с Управляющим советом. | 88. Գիտական խորհրդի կանոնակարգը հաստատում է Համալսարանի գործող Գիտական խորհուրդը: |
| 89. Ученый совет Университета:<br>1) принимает решения о созыве Конференции (собрания представителей всех структурных подразделений и обучающихся);<br>2) рассматривает и принимает решения по вопросам образовательной, научно- | 89. Համալսարանի Գիտական խորհուրդը.<br>1) ընդունում է որոշումներ Համալսարանի Կոնֆերանի (Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների և ուսումնառողների ներկայացուցիչներից կազմված ժողովի) հրավիրման վերաբերյալ, |

| | |
|---|---|
| исследовательской, информационно-аналитической деятельности, а также по вопросам международного сотрудничества Университета;<br>3) утверждает учебные планы, описания и календарные учебные графики образовательных программ;<br>4) проводит избрание по конкурсу на должности научно-педагогических работников;<br>5) представляет работников Университета к присвоению ученых званий;<br>6) рассматривает вопросы о присвоении работникам Университета почетных званий Сторон, представлении к государственным и иным наградам и премиям;<br>7) утверждает и присуждает почетные звания и награды Университета;<br>8) утверждает положения, регулирующие вопросы стипендиального обеспечения обучающихся Университета;<br>9) учреждает и утверждает именные стипендии, выдвигает кандидатов на стипендии Президента Российской Федерации, Правительства Российской Федерации, Президента Республики Армения, Правительства Республики Армения и др.;<br>10) определяет приоритетные направления научных исследований;<br>11) утверждает темы диссертаций;<br>12) утверждает годовые планы научно-исследовательских работ Университета;<br>13) рассматривает вопросы деятельности действующих в Университете специализированных советов по защите диссертаций;<br>14) рассматривает вопросы редакционно-издательской деятельности;<br>15) рассматривает и решает другие вопросы, отнесенные к его компетенции законодательством Сторон и настоящим Уставом. | 2) քննարկում և ընդունում է որոշումներ Համալսարանի կրթական, գիտահետազոտական, տեղեկատվական-վերլուծական գործունեության, ինչպես նաև միջազգային համագործակցության հարցերի վերաբերյալ,<br>3) հաստատում է կրթական ծրագրերի ուսումնական պլանները, մասնագրերը և ուսումնական գործընթացի ժամանակացույցերը,<br>4) իրականացնում է գիտամանկավարժական աշխատողների պաշտոններում մրցույթով ընտրությունը,<br>5) գիտական կոչումների առաջադրման է ներկայացնում Համալսարանի աշխատակիցներին,<br>6) քննարկում է Համալսարանի աշխատողներին Կողմերի պատվավոր կոչումների, պետական և այլ պարգևների շնորհման առաջադրելու հարցերը,<br>7) հաստատում և շնորհում է Համալսարանի պատվավոր կոչումներ և պարգևներ,<br>8) հաստատում է Համալսարանի սովորողների կրթաթոշակային ապահովման հարցերը կարգավորող կանոնակարգերը,<br>9) սահմանում և հաստատում է անվանական կրթաթոշակներ, առաջադրում է Ռուսաստանի Դաշնության Նախագահի, Ռուսաստանի Դաշնության Կառավարության, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Կառավարության և այլ կրթաթոշակների թեկնածուներին,<br>10) սահմանում է գիտական հետազոտությունների առաջնահերթ ուղղությունները,<br>11) հաստատում է ատենախոսությունների թեմաները,<br>12) հաստատում է Համալսարանի գիտահետազոտական աշխատանքների տարեկան ծրագրերը,<br>13) քննարկում է Համալսարանում գործող ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդների գործունեության հարցերը,<br>14) քննարկում է խմբագրական և հրատարակչական գործունեության հարցերը,<br>15) քննարկում և հաստատում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցեր: |
| 90. Решения Ученого совета Университета оформляются протоколами и вступают в силу | 90. Համալսարանի Գիտական խորհրդի որոշումները ձևակերպվում են արձանագրությունների ձևով և ուժի մեջ են |

| | |
|---|---|
| с даты подписания их ректором Университета – председателем Ученого совета. | մտնում Համալսարանի ռեկտորի՝ Գիտական խորհրդի նախագահի, կողմից դրանք ստորագրելու օրվանից: |
| 91. Единоличным исполнительным органом Университета является Ректор Университета, который осуществляет непосредственное руководство деятельностью Университета. | 91. Համալսարանի միանձնյա գործադիր մարմինը Համալսարանի Ռեկտորն է, որն իրականացնում է Համալսարանի գործունեության անմիջական ղեկավարումը: |
| 92. Ректор осуществляет управление Университетом на принципах единоначалия и несет ответственность за руководство образовательной, научной, административной и организационно-хозяйственной деятельностью Университета, а также за соблюдение и исполнение законодательства Сторон. | 92. Ռեկտորը Համալսարանի կառավարումն իրականացնում է միանձնյա ղեկավարման սկզբունքներով և պատասխանատվություն է կրում Համալսարանի կրթական, գիտական, վարչական և կազմակերպչական-տնտեսական գործունեության ղեկավարման, ինչպես նաև Կողմերի օրենսդրության պահպանման և կատարման համար: |
| 93. Требования к кандидатам на должность ректора, порядок проведения выборов, а также права, обязанности и полномочия Ректора устанавливаются настоящим Уставом. | 93. Ռեկտորի թեկնածուներին ներկայացվող պահանջները, ընտրությունների անցկացման կարգը, ինչպես նաև Ռեկտորի իրավունքները, պարտականությունները և լիազորությունները սահմանվում են Կանոնադրությամբ: |
| 94. Ректор избирается Управляющим советом в соответствии с настоящим Уставом и утверждается в должности совместным приказом Уполномоченных органов Сторон сроком до 5 лет. Одно и то же лицо не может замещать должность Ректора более 2 сроков подряд.<br>В процедуре выборов участвуют не менее двух кандидатов.<br>Кандидат на должность Ректора Университета должен соответствовать следующим требованиям:<br>1) высшее образование;<br>2) наличие ученой степени и ученого звания;<br>3) не менее 5 лет стажа работы на руководящих должностях в образовательных организациях высшего образования и/или научных организациях;<br>4) не менее 10 лет стажа работы на руководящих должностях;<br>5) не менее 10 лет стажа научной или научно-педагогической деятельности. | 94. Ռեկտորն ընտրվում է սույն Կանոնադրությանը համապատասխան և նշանակվում է պաշտոնում Կողմերի լիազոր մարմինների համատեղ հրամանով՝ մինչև 5 (հինգ) տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան 2 ժամկետ անընդմեջ զբաղեցնել Ռեկտորի պաշտոնը:<br>Ռեկտորի ընտրութաշյանը մասնակցում են առնվազն երկու թեկնածուներ:<br>Ռեկտորի պաշտոնի թեկնածուն պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝<br>1) բարձրագույն կրթություն,<br>2) գիտական աստիճանի և գիտական կոչման առկայություն,<br>3) բարձրագույն կրթության կրթական կազմակերպությունում և/կամ գիտական կազմակերպությունում առնվազն 5 տարվա ղեկավար պաշտոնի փորձառություն;<br>4) ղեկավար պաշտոնի առնվազն 10 տարվա փորձառություն;<br>5) առնվազն 10 տարվա գիտական կամ գիտամանկավարժական փորձ: |
| 95. В случае несогласия одной из Сторон до назначения избранного Ректора может быть применено право вето, в результате которого Ректор считается неизбранным. | 95. Մինչև ընտրված Ռեկտորի նշանակումը Լիազորված մարմիններից մեկի անհամաձայնության դեպքում կարող է կիրառվել վետոյի իրավունք, որի արդյունքում ռեկտորը համարվում է չընտրված: |
| 96. При наличии вакантной должности Ректора или в случае невозможности осуществления полномочий действующего Ректора в течение 10 рабочих дней созывается заседание | 96. Ռեկտորի թափուր պաշտոնի առկայության կամ գործող ռեկտորի լիազորությունների իրականացման անհնարինության դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում հրավիրվում է Կառավարման խորհրդի նիստ՝ ռեկտորի |

| | |
|---|---|
| Управляющего совета для назначения исполняющего обязанности Ректора. Решением Управляющего совета, исполняющим обязанности Ректора назначается физическое лицо, соответствующее требованиям к кандидатам на должность Ректора, установленным настоящим Уставом. | ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու համար: Կառավարման խորհրդի որոշմամբ Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում այն ֆիզիկական անձը, որը համապատասխանում է Կանոնադրությամբ սահմանված` Ռեկտորի պաշտոնի թեկնածուներին ներկայացվող պահանջներին: |
| 97. В случае осуществления Ректором деятельности, влекущей последствия, которые противоречат задачам Университета, Управляющий совет вправе представить Уполномоченным органам Сторон обоснованное предложение о выражении Ректору недоверия, на основании которого Уполномоченные органы Сторон совместным решением вправе освободить Ректора от занимаемой должности. | 97. Եթե Ռեկտորի կողմից իրականացվում է այնպիսի գործունեություն, որն առաջացնում է Համալսարանի խնդիրներին հակասող հետևանքներ, ապա Կառավարման խորհուրդն իրավունք ունի Լիազորված մարմիններին Ռեկտորին անվստահություն հայտնելու հիմնավորված առաջարկություն ներկայացնել, որի հիման վրա Կողմերի Լիազոր մարմինները համատեղ որոշմամբ իրավունք ունեն Ռեկտորին ազատել զբաղեցրած պաշտոնից: |
| 98. Освобождение Ректора от занимаемой должности осуществляется совместным приказом Уполномоченных органов Сторон по инициативе одной из Сторон. | 98. Ռեկտորը զբաղեցրած պաշտոնից ազատվում է է Լիազորված մարմինների համատեղ հրամանով` Կողմերից մեկի նախաձեռնությամբ: |
| 99. Трудовые отношения с Ректором регулируются трудовым договором, заключаемым между Ректором и Уполномоченным органом от Армянской Стороны, выступающим в качестве работодателя и действующим от имени Учредителей Университета.<br>Должностные обязанности Ректора не могут исполняться по совместительству.<br>Ректор имеет право осуществлять научную, научно-педагогическую, творческую деятельность, а также участвовать в деятельности экспертных, консультативных органов и выполнять иную деятельность на общественных началах. | 99. Ռեկտորի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Ռեկտորի և որպես գործատու հանդես եկող ու Համալսարանի հիմնադիրների անունից գործող` Հայկական կողմից Լիազորված մարմնի միջև կնքված աշխատանքային պայմանագրով:<br>Ռեկտորի պաշտոնավարումը չի կարող լինել համատեղությամբ:<br>Ռեկտորը իրավունք ունի իրականացնել գիտական, գիտամանկավարժական, ստեղծագործական գործունեություն, ինչպես նաև մասնակցել փորձագիտական, խորհրդատվական գործունեություն, հասարակական հիմունքներով իրականացնել այլ գործունեություն: |
| 100. Ректор Университета:<br><br>1) осуществляет текущее руководство деятельностью Университета;<br>2) представляет Управляющему совету на утверждение структуру и бюджет Университета, стратегическую программу Университета;<br>3) представляет на рассмотрение Управляющему совету годовой финансовый отчет и годовой отчет о деятельности Университета;<br>4) представляет Уполномоченному органу от Российской стороны проект программы развития Университета, а также ежегодный отчет об ее исполнении;<br>5) утверждает штатное расписание Университета: | 100. Համալսարանի Ռեկտորը.<br><br>1) իրականացնում է Համալսարանի գործունեության ընթացիկ ղեկավարումը,<br>2) Կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում Համալսարանի կառուցվածքը, բյուջեն և ռազմավարական ծրագիրը,<br>3) Կառավարման խորհրդի քննարկմանն է ներկայացնում Համալսարանի տարեկան ֆինանսական հաշվետվությունը և գործունեության տարեկան հաշվետվությունը,<br>4) ներկայացնում է ռուսական կողմի Լիազոր մարմնին Համալսարանի արգացման ծրագրի նախագիծը, ինչպես նաև վերջինիս ամենամյա կատարման հաշվետվությունը;<br>5) հաստատում է Համալսարանի Հաստիքացուցակը,<br>6) պաշտոնի է նշանակում և ազատում պրոռեկտորներին` Կողմերի Լիազորված մարմինների հետ համաձայնեցմամբ; |

| | |
|---|---|
| 6) назначает (увольняет) на должность проректоров Университета по согласованию с Уполномоченными органами Сторон.<br>7) издает приказы, распоряжения, утверждает правила внутреннего трудового распорядка Университета, положения о структурных подразделениях Университета, если иное не предусмотрено настоящим Уставом, должностные инструкции работников, иные локальные нормативные акты Университета;<br>8) назначает (увольняет) на должности всех категорий работников Университета и заключает (расторгает) с ними трудовые договоры, применяет меры поощрения, применяет/снимает дисциплинарные взыскания;<br>9) без доверенности действует от имени Университета, представляет его интересы в отношениях с государственными органами, органами местного самоуправления, юридическими и физическими лицами;<br>10) руководит образовательной, научной, хозяйственной, финансовой, международной и иной деятельностью Университета в соответствии с настоящим Уставом и законодательством Сторон;<br>11) возглавляет Ученый совет Университета;<br>12) определяет полномочия руководящего состава Университета, организует деятельность структурных подразделений;<br>13) распоряжается имуществом и средствами Университета, открывает банковские счета, осуществляет финансово-хозяйственные операции в соответствии с законодательством Сторон. Операции, превышающие размер, установленный Управляющим советом, согласовываются с Управляющим советом;<br>14) по согласованию с Управляющим советом отчуждает недвижимое и особо ценное движимое имущество Университета, определяемое в соответствии с критериями, утвержденными Управляющим советом:<br>15) утверждает сметы доходов и расходов Университета и его структурных подразделений;<br>16) выдает доверенности и заключает договоры и соглашения от имени Университета;<br>17) осуществляет иную деятельность от имени Университета в соответствии с законодательством Сторон и настоящим Уставом. | 7) արձակում է հրամաններ, կարգադրություններ, հաստատում է Համալսարանի ներքին կարգապահական կանոնները, Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, աշխատանքային պարտականությունները, Համալսարանի այլ ներքին ակտեր;<br>8) պաշտոնների է նշանակում Համալսարանի բոլոր կատեգորիաների աշխատողներին և նրանց հետ կնքում աշխատանքային պայմանագրեր, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր;<br>9) հանդես է գալիս Համալսարանի անունից առանց լիազորագրի, ներկայացնում է նրա շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում,<br>10) ղեկավարում է Համալսարանի կրթական, գիտական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեությունը՝ սույն Կանոնադրությանը և կողմերի օրենսդրությանը համապատասխան,<br>11) ղեկավարում է Համալսարանի Գիտական խորհուրդը,<br>12) սահմանում է Համալսարանի ղեկավար կազմի լիազորությունները, կազմակերպում է Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը,<br>13) տնօրինում է Համալսարանի գույքն ու միջոցները, բացում է բանկային հաշիվներ, իրականացնում է ֆինանսատնտեսական գործառնություններ՝ իր իրավասության սահմաններում և Կողմերի օրենսդրությանը համապատասխան<br>14) Կառավարման խորհրդի համաձայնությամբ օտարում է անշարժ և խիստ թանկարժեք շարժական գույքը՝ սահմանված Կառավարման խորհրդի կողմից հաստատված չափանիշներով,<br>15) հաստատում է Համալսարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների եկամուտների և ծախսերի նախահաշիվները,<br>16) տալիս է լիազորագրեր, Համալսարանի անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր,<br>17) Համալսարանի անունից իրականացնում է այլ գործունեություն՝ Կողմերի օրենսդրությանը և սույն Կանոնադրությանը համապատասխան: |
| 101. В структуру управления Университетом и в штатное расписание, по согласованию с Уполномоченными органами Сторон, может быть введена должность Президента Университета. Президент назначается приказом ректора, по согласованию с Уполномоченными органами Сторон, из числа ведущих ученых, | 101. Համալսարանի կառավարման կառուցվածքում և հաստիքացուցակում, Լիազոր մարմնի համաձայնությամբ, կարող է սահմանվել Համալսարանի Նախագահի պաշտոն, որը հանդիսանում է ՌՀՀ-ի կայունության և զարգացման երաշխավորը: |

| | | | |
|---|---|---|---|
| | пользующихся авторитетом в научно-образовательном сообществе, имеющих ученую степень и ученое звание профессора, опыт работы на руководящих должностях в Университете не менее 10 лет, научно-педагогический стаж работы не менее 20 лет. Президент участвует в заседаниях Ученого совета и Ректората Университета, в разработке стратегической программы Университета, представляет Университет в отношениях с государственными органами, органами местного самоуправления, общественными и иными организациями. Президент не вправе занимать административные должности и заниматься иной деятельностью, за исключением научно-педагогической и представительской работы. Функции, права и обязанности Президента устанавливаются Положением о Президенте Университета, утверждаемым Ректором. | | Նախագահը նշանակվում է ռեկտորի հրամանով՝ Լիազոր մարմնի համաձայնությամբ, այն առաջատար գիտնականների շարքերից, ովքեր վայելում են հեղինակություն գիտակրթական հանրության մեջ, ունեն գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում, առնվազն 10 տարվա ղեկավար աշխատանքի փորձ Համալսարանում և առնվազն 20 տարվա գիտա-մանկավարժական աշխատանքի փորձ: Նախագահը պաշտոնի ուժով ընդգրկվում է Համալսարանի Գիտական խորհրդի և Ռեկտորատի կազմում, մասնակցում է Համալսարանի ռազմավարական ծրագրի մշակմանը, ներկայացնում է բուհը պետական մարմինների, տեղական ինքնակառավարման, հասարակական և այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում: Նախագահը իրավունք չունի զբաղեցնել վարչական պաշտոններ կամ իրականացնել այլ գործունեություն՝ բացի գիտա-մանկավարժական և ներկայացուցչական աշխատանքից: Նախագահի գործառույթները, իրավունքները, պարտականությունները և գործունեության պայմանները սահմանվում են Համալսարանի Նախագահի մասին կանոնակարգով, որը հաստատվում է ռեկտորի կողմից: |
| 102. | Текущие вопросы деятельности Университета рассматриваются на заседаниях Ректората, который является совещательным органом при Ректоре. Состав Ректората и регламент его работы утверждается приказом Ректора. Положение о Ректорате утверждается Ректором Университета. Решения Ректората принимаются к исполнению Протоколом, утверждаемым Ректором. | 102. | Համալսարանի գործունեության ընթացիկ հարցերը քննարկվում են Ռեկտորատի նիստերում, որը Ռեկտորին կից խորհրդակցական մարմին է: Ռեկտորատի կազմը և աշխատակարգը հաստատվում են Ռեկտորի հրամանով: Ռեկտորատի կանոնադրությունը հաստատվում է Համալսարանի Ռեկտորի կողմից: Ռեկտորատի որոշումները կատարման են ընդունվում Ռեկտորի կողմից հաստատվող արձանագրությամբ: |
| 103. | Проректоры принимаются на работу по согласованию с Уполномоченными органами Ректором Университета по трудовому договору, срок окончания которого не может превышать срок полномочий Ректора Университета. Количество проректоров и распределение обязанностей между ними устанавливаются Ректором Университета. | 103. | Պրոռեկտորները ընդունվում են աշխատանքի Համալսարանի Ռեկտորի կողմից՝ Լիազոր մարմինների համաձայնությամբ: Ռեկտորի կողմից նշանակված պրոռեկտորների հետ կնքվում են աշխատանքային պայմանագրեր, որոնց ժամկետը չի կարող գերազանցել Ռեկտորի պաշտոնավարման ժամկետին: Պրոռեկտորների թիվը և նրանց միջև պարտականությունների բաշխումը սահմանում է Համալսարանի Ռեկտորը: |
| 104. | В Институтах и при общеобразовательной школе Университета могут создаваться представительные органы – ученые советы (советы), порядок создания и деятельности которых определяются Ученым советом Университета. | 104. | Համալսարանի ինստիտուտներում և հանրակրթական դպրոցում կարող են ստեղծվել ներկայացուցչական մարմիններ՝ գիտական խորհուրդներ (խորհուրդներ), որոնց ստեղծման և գործունեության կարգը սահմանում է Համալսարանի Գիտական խորհուրդը: |

| | |
|---|---|
| 105. В целях учета мнения обучающихся и научно-педагогических работников по вопросам управления Университетом и при принятии Университетом локальных нормативных актов, затрагивающих их права и законные интересы, по инициативе обучающихся и педагогических работников, в Университете:<br><br>1) Создается Студенческий совет (совет обучающихся).<br>Студенческий совет возглавляет председатель совета. Структура, порядок формирования, срок полномочий и компетенция Студенческого совета, а также порядок принятия Студенческим советом решений и выступления от имени Университета определяются положением Студенческого совета, утверждаемым Ректором Университета.<br><br>2) Действует Профсоюзная организация.<br>Структура, порядок образования, сроки полномочий, порядок принятия решений и другие вопросы, относящиеся к деятельности Профсоюзной организации, определяются Уставом Профсоюза в соответствии с законодательством Республики Армения. | 105. Համալսարանի կառավարման հարցերի վերաբերյալ ուսանողների և գիտամանկավարժական աշխատողների կարծիքը հաշվի առնելու նպատակով և Համալսարանի կողմից իրենց իրավունքներին և օրինական շահերին վերաբերող ներքին նորմատիվային ակտեր ընդունելիս ուսանողների և գիտամանկավարժական աշխատողների նախաձեռնությամբ Համալսարանում.<br><br>1) Ստեղծվում է Ուսանողական խորհուրդ (Սովորողների խորհուրդ): Ուսանողական խորհուրդը գլխավորում է խորհրդի նախագահը: Ուսանողական խորհրդի կառուցվածքը, կազմավորման կարգը, լիազորությունների ժամկետն ու իրավասությունը, ինչպես նաև ուսանողական խորհրդի կողմից որոշումներ ընդունելու և Համալսարանի անունից հանդես գալու կարգը սահմանվում են Համալսարանի Ռեկտորի կողմից հաստատվող Ուսանողական խորհրդի Կանոնադրությամբ:<br><br>2) Գործում է Արհեստակցական կազմակերպություն:<br>107.1Արհեստակցական կազմակերպության կառուցվածքը, կազմավորման կարգը, լիազորությունների ժամկետները, որոշումների ընդունման կարգը և գործունեությանը վերաբերող այլ հարցերը կարգավորվում են Արհեստակցական կազմակերպության կանոնադրությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| **VIII. РАБОТНИКИ И ОБУЧАЮЩИЕСЯ УНИВЕРСИТЕТА** | **VIII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ** |
| 106. Научным и педагогическим работникам и обучающимся в Университете гарантируются академические права и свободы, предусмотренные законодательством Сторон. | 106. Համալսարանում գիտական և մանկավարժական աշխատողների ու ուսումնառուներին երաշխավորվում են Կողմերի պետությունների օրենսդրությամբ նախատեսված ակադեմիական իրավունքներ ու ազատություններ: |
| 107. Обучающимися Университета считаются учащиеся общеобразовательной школы Университета, студенты, аспиранты, соискатели, слушатели и другие категории обучающихся<br>в соответствии с законодательством Сторон. | 107. Համլասարանի ուսումնառողներ են համարվում Համալսարանի Հանրակրթական դպրոցի աշակերտները, ուսանողները, ասպիրանտները, հայցորդները, ունկնդիրները և Կողմերի օրենսդրությամբ նախատեսված այլ կատեգորիաների սովորողները: |
| 108. Обучающиеся в Университете имеют права и обязанности, установленные законодательством Сторон, настоящим Уставом и локальными нормативными актами Университета. | 108. Համալսարանում ուսումնառողները ունեն Կողմերի օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ և Համալսարանի ներքին ակտերով սահմանված իրավունքներ և պարտականություններ: |
| 109. Обучающиеся в Университете имеют право: | 109. Համալսարանում ուսանողներն իրավունք ունեն. |

| | |
|---|---|
| 1) избирать и быть избранными в составы ученых советов (советов) Университета;<br>2) участвовать в обсуждении и решении вопросов, относящихся к деятельности Университета;<br>3) бесплатно пользоваться библиотекой Университета, информационными фондами, услугами учебных, научных и других подразделений Университета в порядке, установленном локальными нормативными актами Университета;<br>4) принимать участие в научно-исследовательских работах, конференциях, симпозиумах;<br>5) представлять свои работы для публикации, в том числе в изданиях Университета;<br>6) получать моральное и (или) материальное поощрение за особые успехи в учебе и активное участие в научно-исследовательской и общественной работе Университета;<br>7) и иные права в соответствии с законодательством Сторон. | 1) ընտրել և ընտրվել Համալսարանի գիտական խորհուրդների (խորհուրդների) կազմում,<br>2) մասնակցել Համալսարանի գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,<br>3) Համալսարանի ներքին ակտերով սահմանված կարգով անվճար օգտվել Համալսարանի գրադարանից, տեղեկատվական ֆոնդերից, Համալսարանի ուսումնական, գիտական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,<br>4) մասնակցել գիտահետազոտական աշխատանքներին, կոնֆերանսներին, սիմպոզիումներին,<br>5) ներկայացնել իրենց աշխատանքները հրապարակման համար, այդ թվում՝ Համալսարանի հրատարակություններում,<br>6) բարոյական և (կամ) նյութական խրախուսման արժանանալ ուսման մեջ առանձնահատուկ հաջողությունների և համալսարանի գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցելու համար,<br>7) և Կողմերի օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ: |
| 110. Обучающиеся в Университете обязаны:<br>1) соблюдать настоящий Устав, правила, установленные локальными нормативными актами Университета;<br>2) поддерживать порядок и дисциплину на территории Университета (в учебных аудиториях, лабораториях, на кафедрах и др.), бережно относиться к имуществу Университета;<br>3) выполнять иные обязанности, предусмотренные законодательством Сторон. | 110. Համալսարանում սովորողները պարտավոր են.<br>1) հետևել սույն Կանոնադրությանը, Համալսարանի այլ ներքին նորմատիվային ակտերին,<br>2) Համալսարանի տարածքում պահպանել կարգուկանոն և կարգապահություն (ուսումնական լսարաններում, լաբորատորիաներում, ամբիոններում և այլն), խնամքով վերաբերվել Համալսարանի գույքին,<br>3) կատարել Կողմերի օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ: |
| 111. К обучающемуся, не соблюдающему требования настоящего Устава, правил локальных нормативных актов Университета, не выполнившему в установленные сроки учебный план, могут быть применены дисциплинарные взыскания, установленные локальными нормативными актами Университета. | 111. Սույն Կանոնադրության, այլ ակտերի պահանջները չպահպանող ուսանողի նկատմամբ, ով սահմանված ժամկետում չի կատարել ուսումնական ծրագիրը, կարող են կիրառվել Համալսարանի ներքին նորմատիվային ակտերով սահմանված կարգապահական տույժեր: |
| 112. Возможность и порядок предоставления повторного обучения определяется Университетом в соответствии с законодательством Сторон. | 112. Կրկնակի ուսուցման տրամադրման հնարավորությունը և կարգը սահմանվում է Համալսարանի կողմից Կողմերի օրենսդրությանը համապատասխան: |
| 113. В Университете предусматриваются должности педагогических, научных, научно-педагогических, административно-управленческих, технических, учебно-вспомогательных и иных работников. | 113. Համալսարանում նախատեսվում են մանկավարժական, գիտական, գիտամանկավարժական, վարչական-կառավարչական, տեխնիկական, ուսումնաօժանդակ և այլ պաշտոններ: |

| | |
|---|---|
| 114. Работники Университета имеют право:<br>1) избирать и быть избранными в составы ученых советов (советов) Университета;<br>2) участвовать в обсуждении и решении вопросов, относящихся к деятельности Университета;<br>3) пользоваться бесплатно услугами библиотеки, информационных фондов, учебных и научных подразделений, а также услугами социально-бытовых и других структурных подразделений Университета в соответствии с локальными нормативными актами Университета;<br><br>Работники Университета пользуются иными правами в соответствии с законодательством Республики Армения, настоящим Уставом Университета, трудовыми договорами, должностными инструкциями и иными локальными актами Университета. | 114. Համալսարանի աշխատակիցներն ունեն իրավունք.<br>1) ընտրել և ընտրվել Համալսարանի գիտական խորհուրդների (խորհուրդների) կազմում,<br>2) մասնակցել Համալսարանի գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,<br>3) Համալսարանի ներքին իրավական ակտերին համապատասխան անվճար օգտվել գրադարանի, տեղեկատվական ֆոնդերի, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև Համալսարանի սոցիալ-կենցաղային և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ծառայություններից,<br><br>Համալսարանի աշխատակիցներն օգտվում են այլ իրավունքներից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Համալսարանի Կանոնադրությանը, աշխատանքային պայմանագրերին, աշխատանքային պարտականություններին և Համալսարանի այլ ներքին ակտերին համապատասխան: |
| 115. Работники Университета обязаны:<br>1) соблюдать трудовое и иное законодательство Сторон, настоящий Устав и иные локальные акты Университета;<br>2) добросовестно исполнять трудовые обязанности, возложенные трудовым договором, соблюдать правила внутреннего трудового распорядка и иные локальные нормативные акты Университета, выполнять решения органов управления Университета, требования по охране труда и технике безопасности;<br>3) поддерживать порядок и дисциплину на территории Университета (в учебных аудиториях, лабораториях, на кафедрах и др.), бережно относиться к имуществу Университета.<br><br>Работники Университета несут иные обязательства в соответствии с законодательством Республики Армения, настоящим Уставом Университета, трудовыми договорами, правилами внутреннего трудового распорядка, должностными инструкциями и иными локальными нормативными актами Университета. | 115. Համալսարանի աշխատողները պարտավոր են.<br>1) Հետևել Կողմերի աշխատանքային և այլ օրենսդրությանը, սույն Կանոնադրությանը և Համալսարանի այլ ներքին ակտերին,<br>2) բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով վերապահված աշխատանքային պարտականությունները, պահպանել Համալսարանի աշխատանքային ներքին կարգապահական կանոնները և այլ ներքին ակտերը, կատարել Համալսարանի կառավարման մարմինների որոշումները, աշխատանքի պաշտպանության և անվտանգության պահանջները,<br>3) Համալսարանի տարածքում պահպանել կարգուկանոն և կարգապահություն (ուսումնական լսարաններում, լաբորատորիաներում, ամբիոններում և այլն), խնամքով վերաբերվել Համալսարանի գույքին,<br>Համալսարանի աշխատողները կրում են այլ պարտականություններ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Համալսարանի կանոնադրությանը, աշխատանքային պայմանագրերին, աշխատանքային ներքին կարգապահական կանոններին, աշխատանքային պարտականություններին և Համալսարանի այլ ներքին ակտերին համապատասխան: |
| 116. Работникам Университета за успехи в методической, научной, воспитательной работе и другой деятельности устанавливаются различные формы морального и материального поощрения. | 116. Համալսարանի աշխատողներին մեթոդական, գիտական, կրթական աշխատանքի և այլ գործունեության մեջ հաջողության հասնելու համար սահմանվում են բարոյական և նյութական խրախուսման տարբեր ձևեր: |

| IX. ЭКОНОМИКА УНИВЕРСИТЕТА | IX. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ |
|---|---|
| 117. Финансовое обеспечение деятельности Университета осуществляется Сторонами за счет средств государственного бюджета Республики Армения и федерального бюджета Российской Федерации, а также за счет внебюджетных собственных средств.<br>Университет самостоятельно осуществляет финансово-хозяйственную деятельность, решает вопросы, связанные с заключением договоров, определением своих обязательств и иных условий, не противоречащих законодательствам Сторон и настоящему Уставу. | 117. Համալսարանի գործունեության ֆինանսական ապահովումը Կողմերն իրականացնում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի և միջոցների հաշվին, ինչպես նաև արտաբյուջետային սեփական միջոցների հաշվին:<br>Համալսարանն ինքնուրույն է իրականացնում ֆինանսատնտեսական գործունեություն, լուծում է պայմանագրերի կնքման, իր պարտավորությունների և Կողմերի օրենսդրություններին և սույն Կանոնադրությանը չհակասող այլ պայմանների սահմանման հետ կապված հարցերը: |
| 118. Финансовое обеспечение реализации задач Университета основывается на его целевой ориентации и множественности источников финансирования и осуществляется Сторонами<br>в соответствии с их национальными стратегическими документами с учетом положений их национального законодательства,<br>а также Университетом за счет средств от приносящей доход деятельности и иных внебюджетных источников финансирования. | 118. Համալսարանի խնդիրների իրականացման համար ֆինանսական ապահովումը հիմնվում է դրա նպատակային ուղղվածության և բազմաթիվ ֆինանսավորման աղբյուրների վրա և իրականացվում է Կողմերի կողմից՝ իրենց ազգային ռազմավարական փաստաթղթերին համապատասխան, հաշվի առնելով իրենց ազգային օրենսդրության դրույթները, ինչպես նաև Համալսարանի կողմից՝ եկամուտ ստեղծող գործունեության և ֆինանսավորման այլ արտաբյուջետային աղբյուրների հաշվին: |
| 119. Университет вправе выступать в качестве арендатора и (или) арендодателя имущества в порядке, установленном законодательством Республики Армения. Университет вправе осуществлять иные сделки с имуществом. | 119. Համալսարանն իրավունք ունի հանդես գալ որպես գույքի վարձակալ և (կամ) վարձատու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Համալսարանն իրավունք ունի իրականացնել գույքի հետ կապված այլ գործարքներ: |
| 120. Финансовое обеспечение Университета осуществляется за счет:<br>1) средств государственного бюджета Республики Армения и федерального бюджета Российской Федерации;<br>2) средств, получаемых от платной образовательной и иной, приносящей доход деятельности;<br>3) средств национальных и международных научных и образовательных фондов, программ и т.д.;<br>4) средств, поступающих от сдачи в аренду имущества Университета;<br>5) добровольных дарений, пожертвований и целевых взносов юридических и физических лиц, в том числе иностранных попечителей, неправительственных фондов, общественных организаций и т. д.; | 120. Համալսարանի ֆինանսական ապահովումն իրականացվում է.<br>1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի միջոցների հաշվին,<br>2) վճարովի կրթական և այլ եկամուտներ բերող գործունեությունից ստացվող միջոցների հաշվին,<br>3) ազգային և միջազգային գիտական և կրթական հիմնադրամների միջոցների, ծրագրերի և այլնի հաշվին,<br>4) գույքի վարձակալությունից ստացվող միջոցներիի հաշվին,<br>5) իրավաբանական և ֆիզիկական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա հոգաբարձուների, ոչ կառավարական հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների |

| | | | |
|---|---|---|---|
| 6) | иных источников, не запрещенных законодательством Сторон. | 6) | և այլ կամավոր նվիրատվությունների, նվիրաբերությունների և նպատակային վճարների հաշվին,<br>Կողմերի օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ: |
| 121. | Уполномоченный орган от Российской Стороны утверждает объем финансирования научных исследований в целях реализации научных и научно-технических проектов в рамках программы развития Университета. | 121. | Համալսարանի զարգացման ծրագրի շրջանակներում գիտական և գիտատեխնիկական նախագծերի իրականացմանն ուղղված ֆինանսավորման ծավալները հաստատում է Ռուսաստանի Դաշնության Լիազոր մարմինը: |
| 122. | Университет по договорам с юридическими и (или) физическими лицами вправе осуществлять прием для обучения и подготовки специалистов соответствующего уровня образования с оплатой стоимости обучения, оказывать платные дополнительные образовательные услуги. Стоимость обучения и размер оплаты за предоставление дополнительных образовательных услуг устанавливаются приказом Ректора Университета с учетом утвержденной сметы доходов и расходов Университета.<br>Университет вправе выполнять работы и оказывать услуги на основе гражданско-правовых договоров, оказывать платные образовательные услуги, если это не противоречит задачам Университета или целям его деятельности, предусмотренным настоящим Уставом в соответствии с законодательством Сторон.<br>К гражданским правоотношениям, возникающим на основе гражданско-правовых договоров, применяется законодательство государства Стороны места выполнения работы, оказания услуг. | 122. | Համալսարանը, իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց հետ պայմանագրերի հիման վրա իրավունք ունի իրականացնել ընդունելություն կրթության համապատասխան մակարդակի մասնագետների պատրաստման և վերապատրաստման համար ուսման վարձի վճարմամբ, մատուցել վճարովի լրացուցիչ կրթական ծառայություններ:<br>Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցման համար ուսման վարձը և վճարի չափը սահմանվում են Համալսարանի ռեկտորի հրամանով՝ հաշվի առնելով Համալսարանի եկամուտների և ծախսերի հաստատված նախահաշիվը:<br>Համալսարանը քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա իրավունք ունի կատարելու աշխատանքներ և մատուցելու ծառայություններ, մատուցելու վճարովի կրթական ծառայություններ, եթե դա չի հակասում Համալսարանի խնդիրներին կամ Կանոնդրությամբ նախատեսված նրա գործունեության նպատակներին՝ Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան:<br>Քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրաքաղաքացիական իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում է աշխատանքի կատարման, ծառայությունների մատուցման վայրի Կողմի պետության օրենսդրությունը: |
| 123. | Университет, в соответствии с локальными нормативными актами, осуществляет премирование, установление надбавок к заработной плате и прочие виды материального стимулирования труда работников. | 123. | Համալսարանը ներքին իրավական ակտերի համաձայն, իրականացնում է պարգևատրում, սահմանում աշխատավարձի հավելումներ և կիրառում աշխատողների նյութական խրախուսման այլ տեսակներ: |
| 124. | Университет вправе осуществлять все виды не запрещенной законодательством Сторон коммерческой и приносящей доход деятельности (включая внешнеэкономическую). | 124. | Համալսարանն իրավունք ունի իրականացնելու Կողմերի օրենսդրությամբ չարգելված առևտրային և եկամուտ բերող գործունեության բոլոր տեսակները (ներառյալ՝ արտաքին տնտեսական): |

| | | | |
|---|---|---|---|
| 125. | Здания, строения, сооружения и другие объекты недвижимости, земельные участки, а также объекты движимого имущества, используемые Университетом и внесенные Сторонами в качестве вклада в имущественный комплекс Университета либо приобретенные Университетом за счет средств любых источников, предназначены исключительно для выполнения задач Университета. Стороны вправе участвовать в финансировании ремонта и реконструкции зданий, а также в строительстве и приобретении новых зданий, сооружений и объектов с возможностью их дальнейшей передачи Университету в собственность или в безвозмездное пользование в соответствии с законодательством государств Сторон. Стороны предоставляют Университету в безвозмездное пользование земельные участки, необходимые для осуществления Университетом деятельности исключительно для обеспечения выполнения задач Университета. Расширение инфраструктуры Университета рассматривается в рамках реализуемых стратегических программ государств Сторон. | 125. | Շենքերը, շինությունները, կառույցերը և այլ անշարժ գույքը, հողատարածքները, ինչպես նաև շարժական գույքի օբյեկտները, որոնք օգտագործվում են Համալսարանի կողմից և ներկայացվել են Կողմերի կողմից՝ որպես ներդրում Համալսարանի գույքային համալիրում կամ ձեռք են բերվել Համալսարանի կողմից ցանկացած աղբյուրի միջոցների հաշվին, նախատեսված են բացառապես Համալսարանի խնդիրների կատարումն ապահովելու համար: Կողմերն իրավունք ունեն մասնակցելու շենքերի վերանորոգման և վերակառուցման ֆինանսավորմանը, ինչպես նաև նոր շենքերի, շինությունների և օբյեկտների կառուցմանն ու ձեռքբերմանը՝ հետագայում դրանք փոխանցելու համար Համալսարանին սեփականության կամ անհատույց օգտագործման հնարավորությամբ, Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան: Համալսարանի գործունեության իրականացման համար անհրաժեշտ հողատարածքները Կողմերի կողմից տրամադրվում են Համալսարանին անհատույց օգտագործման՝ Համալսարանի խնդիրների կատարումն ապահովելու համար: Համալսարանի ենթակառուցվածքի ընդլայնումը դիտարկվում է Կողմերի պետությունների կողմից իրականացվող ռազմավարական ծրագրերի շրջանակներում: |
| 126. | Здания, строения, сооружения и другие объекты недвижимости, земельные участки, а также объекты движимого имущества, используемые Университетом для осуществления деятельности, предусмотренной настоящим Уставом, внесенные Сторонами в качестве вклада в имущественный комплекс Университета либо приобретенные Университетом за счет средств любых источников, являются собственностью Университета. Указанная собственность предназначена исключительно для обеспечения деятельности Университета. | 126. | Համալսարանի կողմից կանոնադրությամբ նախատեսված գործունեության իրականացման համար օգտագործվող շենքերը, շինությունները, կառույցները և այլ անշարժ գույքը, հողամասերը, ինչպես նաև այլ շարժական գույքը, որոնք Կողմերը ներդրել են Համալսարանի գույքային համալիրում կամ ձեռք են բերել Համալսարանի կողմից ցանկացած աղբյուրի միջոցների հաշվին, Համալսարանի սեփականությունն են: Նշված գույքը նախատեսված է բացառապես Համալսարանի գործունեությունն ապահովելու համար: |
| 127. | Университет несет ответственность за сохранность и эффективное использование закрепленного за ним имущества. | 127. | Համալսարանը պատասխանատվություն է կրում իրեն ամրացված գույքի պահպանման և արդյունավետ օգտագործման համար: |
| 128. | Закупочная деятельность Университета осуществляется по месту деятельности в соответствии с законодательством Республики Армения.<br>Основные требования к принципам и порядку осуществления закупочной деятельности Университета регламентируются Положением о закупках Университета, утверждаемым Ректором | 128. | Համալսարանի գնումների գործունեությունն իրականացվում է ըստ գործունեության վայրի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:<br>Համալսարանի գնումների գործունեության իրականացման սկզբունքների և ընթացակարգի հիմնական պահանջները |

| | | | |
|---|---|---|---|
| | Университета<br>по согласованию с Управляющим советом. | | կարգավորվում են Համալսարանի գնումների կանոնակարգով: |
| 129. | Университет вправе создавать Эндаумент и другие фонды, не противоречащие законодательствам государств Сторон. | 129. | Համալսարանը իրավունք ունի ստեղծել Էնդաումենտ և այլ ֆոնդեր՝ չհակասող Կողմերի պետությունների օրենսդրությանը: |
| 130. | Университет осуществляет бухгалтерский учет и представляет финансовую отчетность в порядке, установленном законодательством Республики Армения.<br>Университет ведёт налоговый учет и представляет в налоговые органы по месту своей регистрации все предусмотренные законодательством отчёты и документы в установленные сроки. | 130. | Համալսարանն իրականացնում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:<br>Նաև Համալսարանն իրականացնում է հարկային հաշվառում և իր գրանցման վայրի հարկային մարմիններին ներկայացնում է օրենքով նախատեսված բոլոր հաշվետվությունները և փաստաթղթերը՝ սահմանված ժամկետներում: |
| 131. | Контроль за исполнением законодательства Сторон в области бюджетной и финансовой дисциплины в Университете осуществляют уполномоченные органы государственной власти Сторон. | 131. | Համալսարանում բյուջետային և ֆինանսական կարգապահության ոլորտում Կողմերի օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Կողմերի պետական իշխանության լիազորված մարմինները: |
| **X. МЕЖДУНАРОДНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ УНИВЕРСИТЕТА** | | **X. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ** | |
| 132. | В целях распространения армянского и русского языков и содействия расширению общего культурного, образовательного и научного пространства Уполномоченные органы Сторон содействуют Университету в развитии сотрудничества с образовательными и научными организациями Сторон. | 132. | Ռուսաց և հայոց լեզուների տարածմանը և Կողմ պետությունների ընդհանուր մշակութային, կրթական և գիտական համակարգի ընդլայնմանը նպաստելու նպատակով Կողմերի Լիազոր մարմիններն աջակցում են Համալսարանին՝ Կողմ պետությունների կրթական և գիտական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման գործում: |
| 133. | Университет осуществляет международное сотрудничество в сфере образования, научной и (или) научно-технической, инновационной и иной деятельности в соответсвии с законодательством Сторон и международными договорами, сторонами которых они являются. | 133. | Համալսարանը միջազգային համագործակցություն է իրականացնում կրթության, գիտական և (կամ) գիտատեխնիկական, նորարարական և այլ գործունեության ոլորտում՝ համաձայն Կողմերի պետությունների օրենսդրության և միջազգային պայմանագրերի: |
| 134. | Уполномоченные органы Сторон информируют Университет о возможности его участия в государственных программах в сфере образования и науки Сторон в целях привлечения обучающихся, научных и педагогических работников Университета к реализации указанных программ. | 134. | Կողմերի լիազոր մարմինները տեղեկացնում են Համալսարանին Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության ոլորտի պետական ծրագրերին մասնակցելու հնարավորության մասին՝ Համալսարանի սովորողներին, գիտական և մանկավարժական աշխատողներին նշված ծրագրերի իրականացմանը ներգրավելու նպատակով: |

| | |
|---|---|
| 135. Университет развивает гуманитарные связи посредством международной академической мобильности обучающихся, научных и педагогических, иных работников Университета для повышения конкурентоспособности в мировом образовательном пространстве. | 135. Համալսարանը զարգացնում է հումանիտար կապերը Համալսարանի սովորողների, մանկավարժական, գիտական և այլ աշխատողների միջազգային կրթական համակարգում մրցունակությունը բարձրացնելու նպատակով: |
| 136. Заключение Университетом соглашений о сотрудничестве осуществляется в соответствии с законодательством Сторон. | 136. Համալսարանի կողմից համագործակցության մասին համաձայնագրերի կնքումն իրականացվում է Կողմ պետությունների օրենսդրությանը համապատասխան: |
| 137. Университет имеет право осуществлять международное сотрудничество в области образования, науки, научно-технической и иной деятельности в соответствии с законодательством Сторон и международными договорами Республики Армения и Российской Федерации с другими иностранными государствами. | 137. Համալսարանն իրավունք ունի կրթության, գիտության, գիտատեխնիկական և այլ գործունեության բնագավառում միջազգային համագործակցություն իրականացնել Կողմերի օրենսդրությանը և այլ օտարերկրյա պետությունների հետ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերին համապատասխան: |
| 138. Основными направлениями международной деятельности Университета являются:<br>1) участие в программах академической мобильности, двустороннего и многостороннего обмена обучающимися и научно-педагогическими работниками;<br>2) проведение совместных научных исследований, конгрессов, конференций, симпозиумов и других мероприятий в рамках деятельности Университета;<br>3) осуществление фундаментальных и прикладных научных исследований, а также опытно-конструкторских работ по заказам иностранных юридических лиц;<br>4) разработка и реализация совместных образовательных программ, в том числе программ двойных дипломов;<br>5) приглашение иностранных преподавателей и специалистов для участия в образовательном процессе и научной работе;<br>6) направление преподавателей в зарубежные образовательные организации на педагогическую и научную стажировки;<br>7) обучение иностранных граждан и лиц без гражданства;<br>8) оказание консультационных услуг иностранным организациям;<br>9) участие в конкурсах на получение грантов различных международных организаций в области реализации международных исследовательских программ;<br>10) заключение с иностранными юридическими и (или) физическими лицами договоров о сотрудничестве; | 138. Համալսարանի միջազգային գործունեության հիմնական ուղղություններն են.<br>1) մասնակցություն ակադեմիական շարժունակության, սովորողների և գիտամանկավարժական աշխատողների երկկողմ և բազմակողմ փոխանակման ծրագրերին,<br>2) համատեղ գիտական և կիրառական հետազոտությունների, համագումարների, գիտաժողովների, սիմպոզիումների և համալսարանի գործունեության շրջանակներում այլ միջոցառումների իրականացում,<br>3) օտարերկրյա իրավաբանական անձանց պատվերներով հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների, ինչպես նաև փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացում,<br>4) համատեղ կրթական ծրագրերի, այդ թվում՝ երկու/կրկնակի դիպլոմի ծրագրերի մշակում և իրականացում,<br>5) ուսումնական գործընթացին և գիտական աշխատանքներին մասնակցելու համար օտարերկրյա դասախոսների և մասնագետների հրավեր,<br>6) դասախոսների գործուղում արտասահմանյան կրթական կազմակերպություններ մանկավարժական և գիտական վերապատրաստումներ անցնելու համար,<br>7) օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ուսուցում, |

| | |
|---|---|
| 11) участие в международных программах совершенствования высшего образования;<br>12) осуществление иных форм международного сотрудничества, соответствующих законодательству Сторон. | 8) խորհրդատվական ծառայությունների մատուցում օտարերկրյա կազմակերպություններին,<br><br>9) միջազգային հետազոտական ծրագրերի իրականացման բնագավառում տարբեր միջազգային կազմակերպությունների դրամաշնորհների մրցույթների մասնակցություն,<br>10) օտարերկրյա իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց հետ համագործակցության պայմանագրերի կնքում,<br>11) բարձրագույն կրթության կատարելագործման միջազգային ծրագրերին մասնակցություն,<br>12) Կողմերի օրենսդրությանը համապատասխան միջազգային համագործակցության այլ ձևերի իրականացում: |
| **XI. ВИДЫ ЛОКАЛЬНЫХ НОРМАТИВНЫХ АКТОВ УНИВЕРСИТЕТА** | **XI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՈԿԱԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ** |
| 139. Университет принимает локальные нормативные акты, содержащие нормы, регулирующие образовательную и иную деятельность, осуществляемую Университетом в пределах своей компетенции в соответствии с законодательством Сторон и Соглашением. Локальные нормативные акты не могут противоречить законодательству Сторон, Соглашению и настоящему Уставу. | 139. Համալսարանն ընդունում է ներքին նորմատիվային ակտեր, որոնք պարունակում են Համալսարանի կողմից Կողմերի օրենսդրությանը և Համաձայնագրին համապատասխան իր իրավասության սահմաններում ծավալվող կրթական հարաբերությունները և այլ գործունեությունը կարգավորող նորմեր: Ներքին ակտերը չեն կարող հակասել Կողմերի օրենսդրությանը, Համաձայնագրին և սույն Կանոնադրությանը: |
| 140. Деятельность Университета регламентируется такими видами локальных нормативных актов, как приказы, распоряжения, протокольные решения, положения, правила, регламенты, инструкции и иные документы. | 140. Համալսարանի գործունեությունը կարգավորվում է ներքին ակտերի այնպիսի տեսակներով, ինչպիսիք են հրամանները, կարգադրությունները, արձանագրային որոշումները, կարգերը, կանոնները, կանոնակարգերը, հրահանգները և այլ փաստաթղթեր: |
| 141. Локальные нормативные акты принимаются Управляющим советом Университета, Ученым советом Университета, Ректором Университета и иными органами управления Университета в соответствии со своей компетенцией, установленной настоящим Уставом. | 141. Ներքին ակտերն ընդունվում են Համալսարանի Կառավարման խորհրդի, Համալսարանի Գիտական խորհրդի, Համալսարանի Ռեկտորի և Համալսարանի կառավարման այլ մարմինների կողմից՝ սույն Կանոնադրությամբ սահմանված իրենց իրավասությանը համապատասխան: |
| 142. Порядок разработки, согласования, принятия, изменения и отмены локальных нормативных актов Университета, регулирующих права обучающихся, определяется настоящим Уставом и иными локальными нормативными актами и обеспечивает участие обучающихся в управлении Университетом. | 142. Համալսարանի ուսանողների իրավունքները կարգավորող տեղական կարգավորող ակտերի մշակման, համակարգման, ընդունման, փոփոխման և ուժը կորցրած ճանաչման կարգը սահմանվում է Կանոնադրությամբ և այլ տեղական կարգավորող ակտերով և ապահովում է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ուսանողների մասնակցությունը Համալսարանի կառավարմանը: |
| 143. | Локальные нормативные акты Университета, непосредственно затрагивающие права и обязанности обучающихся, подлежат обязательному учету мнения представительных органов обучающихся и доводятся до сведения обучающихся в установленном порядке до их введения в действие. | 143. | Համալսարանի տեղական կանոնակարգերը, որոնք անմիջականորեն ազդում են ուսանողների իրավունքների և պարտականությունների վրա, ենթակա են ուսանողների ներկայացուցչական մարմինների կարծիքների պարտադիր քննարկման և սահմանված կարգով հաղորդվում են ուսանողներին՝ մինչև դրանց ուժի մեջ մտնելը: |
| **XII.** | **РЕОРГАНИЗАЦИЯ И ЛИКВИДАЦИЯ УНИВЕРСИТЕТА** | **XII.** | **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ** |
| 144. | Университет в установленном законодательством Республики Армения порядке может быть реорганизован. Реорганизация Университета осуществляется в форме присоединения или слияния. | 144. | Համալսարանը կարող է վերակազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Համալսարանի վերակազմակերպումն իրականացվում է միացման կամ միաձուլման ձևով: |
| 145. | Реорганизация Университета осуществляется в порядке, предусмотренном законодательством Республики Армения. | 145. | Համալսարանի վերակազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| 146. | Решение о ликвидации Университета может принять только суд. | 146. | Համալսարանը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը: |
| 147. | Ликвидация Университета осуществляется в порядке и по основаниям, установленным законодательством Республики Армения. | 147. | Համալսարանի լուծարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով: |
| 148. | В случае ликвидации Уполномоченные органы Сторон обеспечивают завершение обучения обучающихся Университета, назначают ликвидационную комиссию, которая составляет ликвидационный баланс имущества Университета.<br>Ликвидационный баланс представляется на утверждение Уполномоченным органам. | 148. | Լուծարման դեպքում Լիազոր մարմինները ապահովում են Համալսարանի սովորողների կրթության ավարտը, նշանակում են լուծարային հանձնաժողով, որը հաստատում է Համալսարանի գույքի լուծարային հաշվեկշիռ:<br>Լուծարային հաշվեկշիռը ներկայացվում է Լիազոր մարմինների հաստատմանը: |